13.531

ԽՍՀՄ ՊԵՏՊԼԱՆԻ
...ԱՇՎԱՌՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴՆԵՐԻ 1935 ԹՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ՊԵՏՊԼԱՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
[illegible] ժողտնտհաշվառման վարչության

1935 Թ.
Երևան

311
Գ-68

Գլավլիտ № 56
Լենինականի տպարան
Տիրաժ 1500
ԱՈՌԻ. Պատվեր № 38

311
Գ-68
25 SEP 2006
1 DEC 2009

# ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

## «ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՅԵՎ ՇՐՋԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ»

Նպատակ ունենալով պայքարել ավելորդ հաշվետվությունների դեմ, վորոնք գրասենյակային աշխատանքով ծանրաբեռնում են գյուղխորհուրդները և շրջանային գործադիր կոմիտեները, ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում են՝

1. Հաստատել բոլոր դաշնակից հանրապետությունների, գյուղխորհրդների և շրջանային գործադիր կոմիտեների համար պարբերական հաշվետվության ցանկ (տես՝ առդիր աղյուսակներ №№ 1, 2)*։

Գյուղխորհրդների և շրջանային գործադիր կոմիտեների հաշվետվության յուրաքանչյուր ձև պետք է հաստատված ու ստորագրված լինի անձամբ՝ Միութենական Պետպլանի Ժողովրդական Տնտեսության հաշվառման Կենտրոնական Վարչության (ՑՈՒՆԽՈՒ) պետ ընկ. ՈՍԻՆՍԿՈՒ կողմից։ Առանց ՑՈՒՆԽՈՒ պետի ստորագրության՝ հաշվետվության բլանկներն անվավեր են։

2. 1933 թ. նոյեմբերի 1-ից վերացնել գյուղխորհրդների և շրջանային գործադիր կոմիտեների այն բոլոր պարբերական հաշվետվությունները, վորոնք չեն նախատեսնված այս վորոշումով։

3. Սահմանել, վոր հետագայում գյուղխորհրդների և շրջանային գործադիր կոմիտեների համար այս վորոշումով նախատեսված պարբերական հաշվետվության ցանկը, ինչպես և հաշվետվությունները ներկայացնելու ժամկետներն ու կարգը, կարող են փոփոխության յենթարկվել յուրաքանչյուր առանձին դեպքում, միմիայն ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի թույլտվությամբ։

4. Միանվագ վիճակագրական հաշվետվությունը կրճատելու նպատակով՝ սահմանել, վոր գյուղխորհրդներից ու շրջանային գործադիր կոմիտեներից միանվագ վիճակագրական տեղեկություններ պահանջելու իրավունք ունեն միայն դաշնակից ու ինքնավար հանրապետությունների նախագահները և մարզային ու յերկրամասերի գործկոմների նախագահները,

* 1934 թ. հաշվետվությունների ցանկը (աղյուսակները) չի կցված։

ՀՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССР

20.03.2013
13531

այն և միայն այն դեպքում, յեթե միանվագ վիճակագրական տեղեկու-թյունների պահանջը բղխում է միութենակ.-կառավարության համապատասխան վորոշումներից և յեթե պահանջված տեղեկությունները չեն նախատեսնված այս վորոշումով սահմանված պարբերական հաշվետվության մեջ:

Արգելել 1933 թ. նոյեմբերի 1-ից մնացած բոլոր հիմնարկություն-ներին ու անձանց պահանջել գյուղխորհրդներից և շրջանային գործադիր կոմիտեներից վորեվե միանվագ վիճակագրական հաշվետվություն:

5. Արգելել գյուղխորհուրդների և շրջանային գործկոմների նախա-գահներին 1934 թ. նոյեմբերի 1-ից սկսած ներկայացնել պարբերական և վոչ պարբերական (միանվագ) վիճակագրական հաշվետվություն այնպիսի ձեվերով ու ժամկետներով, վորոնք նախանշված չեն այս վորոշման մեջ:

Պարտավորեցնել դատախազությանը՝ պատասխանատվության յենթարկել այն անձանց, վորոնք պահանջում են հաշվետվություն ներկայացնել այնպիսի ձեվերով և ժամկետներով, վորոնք նախատեսնված չեն այս վորոշմամբ:

6. Առաջարկել ԽՍՀՄ պետպլանի ժողտնտհաշվառման կենտվարչու-թյանը՝ գյուղխորհրդների, շրջգործկոմների նաև գերատեսչությունների ներկայացուցիչների անպայման մասնակցությամբ, մինչև 1933 թ. հոկտ. 1-ը, գյուղխորհրդների համար մշակել նախնական հաշվետվության առա-վելագույն չափով պարզեցված ձեվեր՝ համարեցնելով այդպիսիները սահ-մանված հաշվետվության հետ և ներկայացնել ԽՍՀՄ ժողկոմխորհին ի հաս-տատություն:

7. Պարտավորեցնել ԽՍՀՄ Պետպլանի ժողտնտհաշվառման Կենտրոնա-կան Վարչությանը և համապատասխան ժողկոմատներին, այս վորոշումով սահմանված վիճակագրական ձեվերի օրինակները մի ամսից վոչ ուշ ժամա-նակամիջոցում հասցնել գյուղխորհրդներին և շրջանային գործկոմներին:

8. Այս վորոշումը ճիշտ և ժամանակին կատարելու պատասխանատվու-թյունը դնել անձնապես Ժողտնտհաշվառման Կենտրոնական Վարչության պետ ընկ. ՕՍԻՆՍԿՈՒ վրա:

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ՝
Վ. ՄՈԼՈՏՈՎ (ՍԿՐՅԱԲԻՆ)

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քարտուղար՝
Ա. ՅԵՆՈՒԿԻՁԵ

Մոսկվա Կրեմլ
1933 թ. օգոստոսի 22-ին

# ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՅԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## (ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈ-ՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 1934 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ՎՈ-ՐՈՇՈՒՄԸ)

Գյուղխորհրդների և շրջանային գործադիր կոմիտեների կողմից ներ-կայացվող հաշվետվությունների ծավալի հետագա կրճատման նպատակով՝ ի փոփոխումն — ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1933 թ. օգոստոսի 22-ի «Գյուղական խորհրդների և շրջանային գործադիր կոմիտեների հաշվետվության կրճատման մասին» վորոշման № № 1 և 2 կցումների՝ (ԽՍՀ Միության 1933 թ. Օր. Ժող. № 54 հոդված 317) — ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում են՝

1935 թ. հունվարի 1-ից գյուղական խորհրդների և շրջանային գործադիր կոմիտեների համար մտցնել պարբերական հաշվետվության ձեվերի սրան կցված ցանկը (տես № № 1, 2, 3 և 4 կցումները):

Ծանոթություն. Շրջգործկոմների հաշվետվության ցանկը (№ 3 և 4 կցումներ) չի կցվում:

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ՝
Վ. ՄՈԼՈՏՈՎ.

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քարտուղար՝
Ա. ՅԵՆՈՒԿԻՁԵ

Կցում № 1

# ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴՆԵՐԻ 1935 Թ. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

## ՀԱՍՏԱՏՎԱԾ՝ ԽՍՀՄ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՅԵՎ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ 1934 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

| Ձևերի №№ | ՁԵՎԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | Ներկայացնելու ժամկետները | Ում պետք է ներկայացնել |
|---|---|---|---|
| | I. Կազմ. աշխատանք | | |
| 1 | Գ. խ.-ի կազմ. մասսայական աշխատանքի հաշվետվությունը . . . | Տարեկան 2 անգ. | Շրջգործկոմին |
| | II. Գյուղատնտեսություն | | |
| 2 | Գարնանացանի նախապատրաստման կամպանիայի մասին . . . . . | Տասնօրյա | Շրջհողբաժնին |
| 3 | Գարնան աշխատանքների և գարնանացանի ընթացքի մասին . . . . | Հնգօրյա | » |
| 4 | Մենատնտեսների բերքի գրության մասին . . . . . . . . . . . . | Հատուկ ժամկետով | » |
| 5 | Կոլտնտեսությունների բերքի գրության մասին . . . . . . . . . | Հատուկ ժամկետով | » |
| 6 | Բերքահավաքի ինվենտարի վերանորոգման մասին . . . . . . . . | Տասնօրյա | » |
| 7 | Կատարված հերկի, քաղհանի, խոտհնձի և սիլոսացման մասին . . | Հնգօրյա | » |
| 8 | Բերքահավաքի, աշնանացանի յեվ ցրտահերկի մասին . . . . . . . | » | » |
| 9 | Ցանովի խոտաբույսերի համար սեր մարաններ հատկացնելու մասին . . | Միանվագ | » |
| 10 | Կոլեկտիվացման ընթացքի մասին . | Յեռամսյա | » |
| 11 | Գյուղատնտեսական բույսերի յեվ կենդանիների վնասատուների դեմ պայքարելու միջոցառումների մասին . . . . . . . . . . . . . | Տասնօրյա | » |
| 12 | Կովազուրկ կոլտնտեսականներին կով ձեռք բերելու գործում օժանդակություն ցույց տալու, և բանող անասունների գրության մասին . . | Ամսական | » |
| 13 | Բեղմնավորման կամպանիայի ընթացքի մասին . . . . . . . . | Տասնօրյա | » |



Շարունակություն

| Ձևերի №№ | ՁԵՎԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | Ներկայացնելու ժամկետները | Ում պետք է ներկայացնել |
|---|---|---|---|
| 14 | Կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսություններում մուտք և յելք յեղած անասունների մասին, վորոնք գրանցված են պետական և շրջանային տոհմային գրքերում . . | Միանվագ | Շրջհողբաժնին |
| | III. Ֆինանսական | | |
| 15 | Միջոցների մոբիլիզացիայի մասին . | Ամիսը 2 անգ. | Շրջֆինբաժնին |
| 16 | Գյուղական հարկերի և տուրքերի ապառքների մասին . . . . . . | Յեռամսյակը մեկ անգամ | » |
| 17 | Գյուղհարկի նախնական հաշվառման արդյունքների և հարկի հաշվառման մասին . . . . . . . . . . . | Տարեկան 1 անգ. | » |
| 18 | 1935 թ. հաշվարկված և գանձված գյուղհարկի յեվ արված արտոնությունների մասին . . . . . . . . | Տարեկան 3 անգ. | » |
| 19 | 1935 թ. ինքնահարկման հաշվարկման արդյունքների մասին . . . . | Տարեկան 1 անգ. | » |
| 20 | Կոլտնտեսություններից և մենատնտեսներից հաշվարկված կուլտտուրքի մասին . . . . . . . . . . . . | Տարեկան 1 անգ. | » |
| 21 | 2 րդ հնգամյակի փոխառության բաժանորդագրության ընթացքը կոլտնտեսականների մեջ . . . . . . . | Ամիսը 2 անգ. | » |
| 22 | Բյուջեի կատարման մասին (մուտք յելք) . . . . . . . . . . . . . | Ամիսը 1 անգ. | » |
| 23 | Գյուղբյուջեյում գանձվող հիմնարկների հատուկ միջոցների մասին . . | Տարեկան 1 անգ. | » |
| 24 | Պետական պարտադիր ապահովագրման գծով հաշվարկված և վճարումների մուտքերի ու տրվող արտոնությունների մասին . . . . . . . | Տարեկան 1 անգ. | » |
| 25 | Պարտադիր կողարային ապահովագրման հաշվարկման արդյունքների մասին (նախնական) . . . . . | Տարեկան 1 անգ. | » |
| | IV. Մթերումներ | | |
| 26 | Ժամկետին՝ կաթի յուղի և մսի պարտավորությունները չկատարող տնտեսությունների մասին . . . . . | Մսի գծով՝ յեռամսյակում 1 անգամ. կաթի և յուղի գծով՝ ամիսը 1 անգամ | Շրջգործկոմին |

| Ձևերի №№ | ՁԵՎԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | Ներկայացնելու ժամկետները | Ում պետք է ներկայացնել |
|---|---|---|---|
| 27 | Ժամկետին՝ բոլոր պարտավորությունները չկատարող տնտեսությունների մասին . . . . . . . | Տարեկան 2 անգ. | Շրջգործկոմին |
| 28 | Պարտավորությունների չկատարված մասի համար (նատուրայով) և դրամական տուգանքներով գանձումների մասին . . . . . . . . | Յուղի, կաթի և հացահատիկային կուլտուրաների գծով՝ ամիսը 1 անգ., մսի գծով՝ կեսամյակում 1 անգ., իսկ բրդի գծով՝ տարեկան 2 անգամ | Շրջգործկոմին և մթերման կոմիտեի լիազորին |
| | V. Սոցիալական ապահովություն | | |
| 29 | Թոշակառուների շարժման մասին. | Տարեկան 1 անգ. | Շրջ. սոցապ. բաժնին |
| | VI. Բանկչություն | | |
| 30 | Քաղաքացիական կեցության արձանագրությունների յերկրորդ օրինակների ցուցակ . . . . . . | Ամիսը 1 անգ. | ՆԳԺԿ Միլիցիայի շրջ. վարչությանը (ԶԱԳՍ-ի բաժ.) |
| | VII. Ճանապարհային շինարարություն | | |
| 31 | Ստորին ցանցի ճանապարհաշինարարության պլանի կատարման հաշվետվություն . . . . . . . . | Ամիսը 1 անգ. | Շրջ. ճան. բաժնին |
| | VIII. Աշխատանք | | |
| 32 | Աշխատավարձի ֆոնդի ծախսման և աշխատավորների թվի մասին . . . | Յեռամսյակը 1 անգամ | Շրջգործկոմին |
| | IX. Սոցիալական ապահովագրություն | | |
| 33 | Ապահովագրական մուծումների հաշվարկման տեղեկագիր . . . . . | Ամիսը 1 անգ. | Շրջ. պրոֆկազմակերպությանը և Պետբանկի շրջ. բաժանմունքին |



Կցում № 2

## ՀԱՏՈՒԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐ.

| Ձևերի №№ | ՁԵՎԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | Ներկայացնելու ժամկետները | Ում պետք է ներկայացնել | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Աշնան-ձմեռային և ձմեռա-գարնանային ջրումների մասին . . . . . . . . . . | Տասնօրյա | Շրջ. հողբաժնին | |
| 2 | Վեգետացիայի շրջանում ջրելու ընթացքի մասին . . . . . . . . . . . . | Հնգօրյա | Շրջ. հողբաժնին | |
| 3 | Բամբակի հողերի նախացանքային մշակման ընթացքի մասին . . . . . . . . | Հնգօրյա | Շրջ. հողբաժնին | |
| 4 | Այգիներ, հատապտուղներ և խաղողանոցներ անկելու մասին . . . . . . . | Տասնօրյա | Շրջ. հողբաժնին | |
| 5 | Այգիների, հատապտուղների և խաղողանոցների ամառային խնամքի մասին . . | Տասնօրյա | Շրջ. հողբաժնին | |

# ՎՈՐՈՇՈՒՄ

## ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

1934 թ. դեկտեմբերի 22-ին

**Հաշվառման վերաբերյալ անկանոն տեղեկություններ ու հաշվետու տվյալներ ներկայացնելու, նաև հաշվառման յեվ հաշվետվության ձևերն ու ժամկետները խախտելու վերաբերյալ պատասխանատվություն սահմանելու մասին:**

ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1933թ. նոյեմբերի 27-ի վորոշման հիման վրա («Իզվեստիա» № 291/5222, 1933թ. նոյեմբերի 30), Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ ԵՆ:

1. Հաշվառման և հաշվետվության վերաբերյալ դիտավորյալ կերպով աղավաղված տեղեկություններ ու տվյալներ ներկայացնող անձանց յենթարկել պատասխանատվության՝ Քր. Օր. 135 հոդ. համաձայն:

2. Հաշվառման և հաշվետու նյութերի վերաբերյալ սահմանված ձևերն ու ժամկետները սիստեմատիկաբար կամ չարամտորեն խախտելու դեպքում մեղավորներին պատասխանատվության յենթարկել Քր. Օր. 137 հոդ, իսկ մեղմացուցիչ հանգամանքներում՝ 138 հոդ. 2-րդ մասի համաձայն:

3. Պարտավորեցնել Ժողդատախազությանը՝ հիշյալ հանցանքներում մեղադրվող անձանց անշեղորեն յենթարկել քրեական պատասխանատվության:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահ՝ Ա. ՄԱՐՏԻԿՅԱՆ
Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալ՝ Ա. ՅԵՐԶՆԿՅԱՆ
Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

# ՀՐԱՀԱՆԳ՝ ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴՆԵՐԻ 1935Թ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

## ՀԱՍՏԱՏՎԱԾ ԽՍՀՄ ԿԳԿ ՅԵՎ ԺԿԽ 1934 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ՎՈՐՈՇՄԱՄԲ

ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1933թ. մարտի 22-ի վորոշումով բոլոր գյուղխորհրդների և շրջանային գործադիր կոմիտեների համար հաստատված է հաշվետվության ձևերի ցանկ, վորով գյուղխորհրդներն ու շրջգործկոմները պետք է առանձին կազմակերպություններին ներկայացնեն հաշվետու տեղեկություններ:

Այս օրենքը գյուղխորհրդներին և շրջգործկոմներին ազատում է ավելորդ, բյուրոկրատիկ հաշվետվություններից և ճիշտ կերպով ցույց տալիս, թե գյուղխորհրդներն ու շրջգործկոմները ում, յերբ և ինչպիսի ձևերով պետք է ներկայացնեն իրենց բոլոր տեսակի հաշվետվությունները:



Բացի այդ, օրենքում մատնանշված է, վոր գյուղխորհրդների և շրջգործկոմների նախագահներին արգելվում է ներկայացնել օրենքով չնախատեսված ձևերով, ժամկետներով և հասցեներով վորևէ հաշվետվություն: Դատախազական մարմինները պարտավոր են պատասխանատվության յենթարկել այն բոլոր անձնավորություններին, վորոնք գյուղխորհրդներից և շրջգործկոմներից կպահանջեն ապօրինի հաշվետվություն:

Գյուղխորհրդների և շրջգործկոմների աշխատանքները հեշտացնելու նպատակով՝ ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ նորից վերանայելով հաշվետվության գոյություն ունեցող ցանկն ու ձևերը, հնարավոր գտան կատարելու նոր կրճատումներ. այս կապակցությամբ՝ ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1934թ. դեկտեմբերի 7-ին հրատարակեցին նոր վորոշում, վորի հիման վրա հաշվետվության հաստատված ձևերի ու ցանկի մեջ մտցված են համապատասխան փոփոխություններ:

ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ կողմից 1934թ. դեկտեմբերի 7-ին հաստատված 1935թ. հաշվետվության ցանկն ու ձևերը հանդիսանում են գյուղխորհրդների և շրջգործկոմների համար պարտադիր և վոչ վոք իրավունք չունի 1935թ. գյուղխորհրդից կամ շրջգործկոմից պահանջելու վորևէ այլ հաշվետվություն՝ բացի ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ կողմից հաստատվածներից:

Այսպիսով, գյուղխորհրդներն ու շրջգործկոմներն ազատվելով ավելորդ հաշվետվություններից, պարտավոր են դիմելու բոլոր միջոցների, վորպեսզի սահմանված հաշվետվությունը կազմվի ճիշտ և ժամանակին:

Չպետք է մոռանալ, վոր կազմելով հաշվետվությունը՝ գյուղխորհրդները կատարում են բարձր պատասխանատու—քաղաքական գործ: Գյուղխորհրդի նախագահն ու քարտուղարը պետք է լավ հիշեն, վոր նրանց հաշվետու տվյալների հիման վրա կուսակցությունն ու իշխանությունը կառուցում են սոցիալիստական տնտեսության զարգացման ժողովրդական տնտեսության պլանը: Դրա համար էլ հաշվետվության մեջ թույլ տված յուրաքանչյուր սխալ հանդիսանում է հսկա չարիք: Պետք է բոլոր միջոցների դիմել, վորպեսզի հաշվետու բոլոր տվյալները լինեն անպայման ստույգ: Վոչ ճիշտ հաշվետվությունը կարող է թյուրիմացության մեջ գցել կուսակցությանն ու իշխանությանը: Ահա թե ինչու, հաշվետվության գործին այդպիսի լուրջ ուշադրություն է դարձվում:

Բոլոր նրանք, վորոնք չեն ներկայացնի ճիշտ տեղեկություններ, օրենքով կյենթարկվեն խիստ պատասխանատվության: ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1933թ. նոյեմբերի 27-ի օրենքում ասված է՝ դիտավորյալ կերպով հաշվառման ու հաշվետվության աղավաղված տվյալներ ներկայացնելու համար, նաև՝ ներկայացվող հաշվառման—հաշվետվական նյութերի համար սահմանված ձևերն ու ժամկետները պարբերաբար կամ չարամտորեն խախտելու համար՝ մեղավորները յենթակա յեն քրեական պատասխանատվության:

Գյուղխորհրդների աշխատողները, վորոնք կիրառում են կուսակցության և իշխանության պատասխանատու դիրեկտիվները, պետք է հատուկ ուշադրությամբ վերաբերվեն հաշվետվություններ կազմելու գործին և ներկայացնեն այն խիստ կերպով սահմանված ժամկետներին:

Գյուղխորհրդների հաշվետվությունները կազմելու աշխատանքները թեթևացնելու նպատակով Ժողտնտհաշվառման Կենտրոնական Վարչությունը մշակել է սույն բերված հաշվառման հրահանգը, որով բացատրվում է, թե ինչպես պետք է լրացնել հաշվետու ձևերը:

## I Բաժին.—ԿԱԶՄ ԱՇԽԱՏԱՆՔ

Ձև № 1. 1. Խորհուրդների կազմակերպչական աշխատանքների վերաբերյալ վիճակագրական հաշվետվությունը պետք է արտահայտի՝

ա) Գյուղխորհրդի սեկցիաների և պատ. խմբակների գործունեությունը հաշվետու 6 ամսվա ընթացքում.

բ) Գյուղխորհրդների սեկցիաների և պատգամավորական խմբակների կազմը՝ առ 1-ն հուլիսի (1-ին կիսամյակի հաշվետվության մեջ) և առ 1-ն հունվարի (2-րդ կիսամյակի հաշվետվության մեջ) դրությամբ:

2. Հաշվետվությունը կազմելու համար պետք է տվյալներ վերցնել՝

ա) Սեկցիաների գործունեության մասին — սեկցիաների արձանագրություններից.

բ) Գյուղխորհրդների, սեկցիաների և պատգ-խմբակների կազմի ու հոսունության մասին — գյուղխորհրդների սեկցիաների և պատգխմբակների անդամների ցուցակներից, այդ ցուցակները պահվում են գյուղխորհրդում (տես՝ գյուղխորհրդների սկզբնական հաշվառման № 50 ձևը):

3. Հաշվետվությունը պետք է կազմել արձանագրությունների տվյալների հիման վրա, որպեսզի հնարավոր լինի ստուգել տեղեկությունների ճշտությունը և միայն այդպիսի ստուգումից հետո պետք է գյուղխորհրդի նախագահը ստորագրի հաշվետվությունը:

4. Այս ձևի առաջին բաժնի 1-ից մինչև 4 հարցերը տալիս են ընդհանուր տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են կոլտնտեսությունները, խորհտնտեսությունները, ՄՏԿ-ները և արդյունաբերական ձեռնարկները՝ խորհուրդների կազմակերպչական աշխատանքներով (պատխմբակներով) ընդգրկելու վերաբերյալ հաշվարկումների համար:

Նույն բաժնի 5-ից մինչև 7 հարցերը վերաբերում են գյուղխորհրդների գործունեությանը՝ արտահայտելով նրա կապը ընտրողների և հասարակական մարմինների՝ սեկցիաների հետ:

5. Երկրորդ բաժինը ցույց է տալիս գյուղխորհրդների անդամների և թեկնածուների հոսունությունը հաշվետու կիսամյակում, նաև գյուղխորհրդի կազմը՝ առ 1-ն հուլիսի և առ 1-ն հունվարի: Աղյուսակի 8-րդ սյունակի տվյալները պետք է ստացվեն այս կերպ՝ 4-րդ սյունակի տվյալներից պետք է հանել 5 և 6 սյունակների տվյալները և գումարել 7-րդ սյունակի տվյալները:

Գյուղխորհրդի այն անդամներն ու թեկնածուները, որոնք իրենց սոցիալական դրությամբ վերաբերվում են ծառայողներին (բացառությամբ



ուսուցիչների, գյուղատնտեսների, բժիշկների, ՃՏՄ-ի անդամների), տնայնագործներին և այլ, մտնում են 17-րդ սյունակի „այլք"-ի մեջ:

6. Երրորդ բաժնում տրվում են տեղեկություններ՝ կազմակերպված սեկցիաների թվի, սեկցիաներում քանակի մասին (առանձին—գյուղխորհրդների անդամների մասին և առանձին—ներգրավվածների մասին) և մի քանի ցուցանիշներ, որոնք բնորոշում են սեկցիաների գործունեությունը:

Իմանալու համար, թե քանի սեկցիա է կանոնավոր աշխատում և քանի սեկցիաներ ունեն մշտական բեռնվածություն՝ այդպիսի սեկցիաների համար պետք է կատարել համապատասխան նշումներ:

Ստացված գործնական առաջարկների մասին պետք է տեղեկություններ տալ սեկցիաների արձանագրությունների հիման վրա-ընդունված առաջարկների մասին՝ 10-րդ սյունակում և դրանցից կատարվածների մասին 11-րդ սյունակում:

7. Չորրորդ բաժնի 2-րդ սյունակում տրվում են տեղեկություններ կազմակերպված խմբակների մասին, իսկ 3-րդ սյունակում նշվում են միայն այն խմբակները, որոնք աշխատում են կանոնավոր:

## II Բաժին.— ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. Գյուղխորհուրդը հաշվետվություն է տալիս իր բոլոր կոլտնտեսությունների, կոլտնտեսականների, մենատնտեսների և հիմնարկների աշխատանքների մասին. Կոլտնտեսությունների և գյուղացիական անհատական տնտեսությունների վերաբերյալ գյուղխորհուրդը հաշվետվություն է ուղարկում ԽՍՀՄ ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի 1934 թ. դեկտեմբերի 7-ի որոշման մեջ թվարկված բոլոր հարցերի մասին,—կոլտնտեսականների և հիմնարկների անհատական տնտեսությունների վերաբերյալ միայն գարնանացանի, աշնան ցանքի ընթացքի և խոտհնձի ընթացքի մասին, իսկ կոլտնտեսականների տնտեսությունների վերաբերյալ՝ հաշվետվություններ գարնան ցանքի ընթացքի. յուրաքանչյուր հաշվետվություն—գարնան ցանքի և հաշվետվություն՝ բերքահավաքման կամպանիայի մասին:

Մենատնտեսությունների մասին գյուղխորհուրդները հաշվետվություն չեն ներկայացնում, քանի որ նրանք պարտավոր են իրենց հաշվետվությունն անմիջականորեն ուղարկել շրջհողբաժնին: Սակայն գյուղխորհուրդը պարտավոր է հողբաժնից ստանալ այն բոլոր տնտեսությունների ցուցակը, որոնք անմիջականորեն հաշվետվություն են ներկայացնում շրջհողբաժին, որպեսզի մնացած բոլոր տնտեսությունները հաշվետու լինեն գյուղխորհրդի առաջ, և ոչ մի դեպքում թույլ չպետք է տալ, որպեսզի որևէ ցանք կամ խոտհարք մնա առանց հաշվի առնելու:

2. Հաշվետվություններն իր ժամանակին և ճիշտ ներկայացնելու նպատակով՝ գյուղխորհուրդը պետք է հոգ տանի ընտրելու ստուգված մարդկանց, որոնք նրան պետք է տան հաշվետու տեղեկություններ: Կոլտնտեսության մասին ներկայացվող հաշվետվության համար պատասխանատու է կոլտնտ

ության նախագահը: Մենատնտեսների, կոլտնտեսականների և հիմնարկների աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը գյուղխորհուրդը պետք է կազմակերպի իր լիազորների միջոցով:

3. Գյուղխորհուրդը պետք է հավաքի իր բոլոր լիազորներին և նրանց մանրամասն բացատրի, թե ինչի մեջ են կայանում նրանց պարտականությունները և ինչպես պետք է անեն նրանք իրենց աշխատանքները:

Պետք է լիազորներին ցույց տալ, վոր դասակարգային թշնամին այստեղ նույնպես ամեն կերպ ձգտում է վնաս հասցնել խորհրդային իշխանությանը, թաքցնել նրանից ցանքերի իսկական չափը: Լիազորի խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի հայտնաբերի դիտավորյալ կերպով թաքցված բոլոր դեպքերը և հանցավորներին յենթարկի պատասխանատվության: Այդ նույն խորհրդակցությունում գյուղխորհուրդը պետք է յուրաքանչյուր լիազորին ծանոթացնի գյուղխորհրդի լիազորի գրքի հետ—գյուղատնտեսական կամպանիայի ընթացքի հաշվառման մասին: Լիազորներին պետք է բացատրել, թե ինչպես պետք է լրացնել այդ գիրքը՝ հատկապես գարնան ցանքի ընթացքի հաշվետվությունը կազմելիս:

Գարնանացանի կամպանիայի ընթացքի հաշվառման վերաբերյալ—գյուղխորհրդի լիազորի գրքի լրացման կարգը ցույց է տրված գյուղխորհրդի հաշվառման հրահանգի IV գլխում (տես յերես 27), նմանապես և գյուղատնտեսական հաշվառման վերաբերյալ—գյուղխորհրդի լիազորի գրքի ձև № 17 բլանկի վրա:

4. Գյուղխորհուրդը պարտավոր է հաշվետվությունը կազմակերպել այնպես, վորպեսզի յուրաքանչյուր հաշվետու ժամկետին նրա մոտ ստացվեն տեղեկությունները անպայման բոլոր կոլտնտեսություններից և գյուղխորհրդի լիազորներից՝ ճիշտ սահմանված ժամկետներին:

Յեթե վորևե կոլտնտեսություն կամ գյուղի լիազոր գյուղխորհրդին իր ժամանակին չի տալիս անհրաժեշտ հաշվետու տեղեկությունները, կամ յեթե տրված տեղեկությունները կազմված են վոչ ճիշտ՝ սխալներով և աղավաղումներով, ապա գյուղխորհուրդը պետք է հանցավորներին յենթարկի պատժի: Յեթե կոլտնտեսության կամ գյուղի լիազորի կողմից նկատվեն գյուղխորհրդին հաշվետու տեղեկությունները ներկայացնելու գործում ուշացումների հաճախակի դեպքեր և այդ տեղեկությունների մեջ պարբերաբար նկատվեն սխալներ կամ աղավաղումներ, գյուղխորհուրդը, ՍՍՀՄ ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի 1933 թ. նոյեմբերի 27-ի վորոշման համաձայն, հանցավորների գործը տալիս է դատարանին՝ նրանց քրեական պատասխանատվության յենթարկելու համար:

5. Գյուղխորհուրդը պատասխանատու յե, վորպեսզի հաշվետու տեղեկությունները, վորոնք նա հանձնում է շրջանին, լինեն ճիշտ և ստույգ. դրա համար նա չպետք է միայն ուղղակի հավաքել կոլտնտեսությունների ու լիազորների ներկայացրած բոլոր տեղեկությունները և ուղարկել շրջան, այլ պարտավոր է դրանք նախ մանրամասն ստուգել: Այդ ստուգումը պետք է կատարվի այս կերպ. առաջինը՝ տեղերում մշտապես հսկել բոլոր կոլտնտեսու-



թյունների և լիազորների հաշվառման աշխատանքների վրա, իսկ այդ նշանակում է, վոր գյուղխորհրդի նախագահը պարտավոր է, լինելով կոլտնտեսություններում, ստուգել, արդյոք ճիշտ են տարվում կոլտնտեսություններում բրիգադիրների ամենօրյա գրանցումները, արդյոք ճիշտ են կատարվում գրանցումները լիազորների գրքերում և համապատասխանում են նրանք իրականությանը: Յերկրորդ՝ կոլտնտեսությունից և լիազորից ստացված տեղեկությունները պետք է համեմատել նախորդ ժամկետին նրանց կողմից տրված տեղեկությունների հետ:

Գյուղխորհուրդը պետք է իմանա, վոր վոչ ճիշտ տեղեկություններ ներկայացնել՝ դա նշանակում է խաբել խորհրդային պետությանը, իսկ կեղծ տեղեկություններ հաղորդելու համար գյուղխորհուրդները կրում են խիստ պատասխանատվություն: Գյուղխորհրդի հաշվետվության համար ամբողջությամբ պատասխանատու յեն գյուղխորհրդի նախագահն ու քարտուղարը:

Հաշվետվության բոլոր նյութերը՝ կոլտնտեսությունների հաշվետվությունները, գյուղխորհրդի լիազորների գրքերը, գյուղատնտեսական կամպանիաների հաշվառման [illegible] պետք է պահվեն գյուղխորհրդի գործերում ամբողջ տարվա ընթացքում, և լինեն այնպիսի վիճակում, վորպեսզի գյուղխորհուրդը միշտ էլ կարողանա լրիվ պատասխանատվությամբ, փաստաթղթերով հաստատել իր հաղորդած տեղեկությունները:

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՈՒ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԿԱՐԳԸ

6. Կոլտնտեսություններից և լիազորներից հաշվետվությունները ստանալիս, գյուղխորհուրդը պարտավոր է անմիջապես ստուգել դրանք հաշվետվությունը բերող անձի ներկայությամբ: Պետք է ստուգել, թե արդյոք կոլտնտեսությունը կամ գյուղխորհրդի լիազորը հաշվետու բլանկի բոլոր հարցերի վերաբերյալ են տալիս տեղեկություններ, համեմատելով այդ նախորդ ժամկետի հաշվետվության հետ և համոզվել այն բանում, վոր աճողական թվերով տրվող տեղեկությունները պակաս չեն, քան առաջվա հաղորդածները: (Օրինակ՝ կոլտնտեսությունը առ 5-ն մայիսի հաշվետվության մեջ հայտնել է, վոր իր կողմից ցանված է 205 հեկտար, իսկ առ 10-ն մայիսի տալիս է հաշվետվություն, վոր ընդամենը ցանված է 195 հեկտար): Գյուղխորհուրդը պետք է նույնպես ըստ էության ստուգի ներկայացված հաշվետվության ճշտությունը: (Օրինակ՝ նախագահին հայտնի յե, վոր [illegible] գյուղում մենատնտեսների մոտ բերքահավաքը վերջացել է ամբողջ տարածության վրա, իսկ լիազորը ներկայացված հաշվետվության մեջ ցույց է տալիս հավաքված հեկտարների վոչ լրիվ թիվը): Յեթե նշված թերությունները հայտնաբերվեն, այդ դեպքում գյուղխորհրդի նախագահը պետք է շտապ կերպով գյուղի լիազորի կամ կոլտնտեսության նախագահի հետ միասին տեղում (դաշտում, անասնագոմում և այլն) ստուգի հաշվետու տեղեկությունների ճշտությունը: Յեթե սխալներ հայտնաբերվեն, ապա անհրա-

մեջ է մտցնել համապատասխան ուղղումներ կոլտնտեսության կամ գյուղի լիազորի ներկայացրած հաշվետվության մեջ, և չարամտորեն թաքցված կամ աչքաթողության հայտնաբերելիս (օրինակ՝ կոլտնտեսությունը կեղծ է տալիս գարնանացանի ավարտման մասին, իսկ փաստորեն՝ ցանքը չի վերջացած), հանցավորներին ենթարկում է պատասխանատվության։

7. Գյուղխորհուրդը պարտավոր է աշխատել, որպեսզի առանց բացառության, բոլոր կոլտնտեսություններից և լիազորներից հաշվետվությունները ստացվեն սահմանված ժամկետին։

Եթե տվյալ ժամկետի համար որևէ կոլտնտեսության կամ գյուղի լիազորի հաշվետվությունը բացակայում է, (որը վկայում է այն մասին, որ գյուղխորհուրդը չի կարողացել այնտեղ կազմակերպել հաշվետվությունը), գյուղխորհուրդը պարտավոր է ամփոփման մեջ մտցնել նախորդ ժամկետի հաշվետվության տեղեկությունները՝ այդ մասին համապատասխան նշումներ կատարելով հաշվետվության մեջ։ Կատեգորիկապես արգելվում է իրեն՝ գյուղխորհրդին ինքնագլուխ կերպով տեղեկություններ մտցնելը կոլտնտեսությունների կամ գյուղերի նկատմամբ, որոնք չեն ներկայացրել հաշվետվություն։

8. Ամբողջ գյուղխորհրդի համար ամփոփումը ճիշտ կազմելու համար յուրաքանչյուր կամպանիայի վերաբերյալ ստացված բոլոր հաշվետվությունները գ/խ քարտուղարը գրանցում է «Գյուղատնտեսական կամպանիայի ընթացքի հաշվառման օրագրում» առանձին կոլտնտեսությունների և առանձին՝ գ/խ լիազորների նկատմամբ։ (Գյուղխորհրդի հաշվառման ձև № 18)։ Օրագրում այդ գրանցումները կատարելուց հետո պետք է նրա մեջ հանրագումարի բերել տվյալներ առանձին-առանձին՝ ըստ կոլտնտեսությունների. կոլտնտեսականների, միանձնատնտեսների և հիմնարկների։ Այնուհետև այդ հանրագումարները պետք է մտցնել գյուղխորհրդի համապատասխան հաշվետվական քարտի մեջ։ Քարտը պետք է ստորագրեն գյուղխորհրդի նախագահն ու քարտուղարը և շտապ ուղարկեն Շրջհողբաժնին։

Իր հաշվետվության հետ միասին, գյուղխորհուրդը Շրջհողբաժին է ուղարկում կոլտնտեսությունների հաշվետվական բլանկները։

Հեռախոսային կապ լինելու դեպքում թույլատրվում է հաշվետվության տվյալները հայտնել Հողբաժնին հեռախոսագրով բայց, այնպայման այդ նույն օրը, հաշվետվությունը պետք ուղարկվի Շրջհողբաժնին՝ սահմանված ձևի բլանկի վրա։

## ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՁԵՎԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այստեղ բացատրություն է տրվում ոչ բոլոր ձևերի և սյունակների վերաբերյալ, այլ դրանցից միայն այնպիսիների մասին, որոնք ավելի դժվար են։

Ձև № 2.— «Հաշվետվություն գարնանացանի կամպանիայի նախապատրաստման մասին»։ Այս ձևով բոլոր տեղեկությունները տրվում են



ամբողջական թվերով, այսինքն՝ տասնօրյա տեղեկություններ տալու ժամանակ, օրինակ՝ առ 1-ն դեկտեմբերի սերմֆոնդի գանձման մասին,— պետք է ցույց տալ ցանքին նախապատրաստվելու ամբողջ ժամանակի համար՝ մինչև դեկտեմբերի 1-ը գանձված ամբողջ սերմերի մասին, և ոչ թե միայն հաշվետու տասնօրյակում (կամ ամսում) գանձված սերմերի մասին։

44-րդ կետը գյուղխորհուրդը լրացնում է հասարակական շահագործների վարիչների հաղորդումների հիման վրա, իսկ 45-րդ կետը, նույնպես նաև՝ ստորագրությամբ անդամների մոտ թողնված հատիկային սերմերի քանակի վերաբերյալ ստուգականների հիման վրա։

Ձև № 3.—«Հաշվետվություն գարնան ցանքի և գարնանային աշխատանքների ընթացքի մասին»։

Այս ձևին վերաբերող բոլոր տեղեկությունները, բացի աշնան ցանքի դրությանը վերաբերող պատասխաններից, տրվում են ամբողջական թվերով։

Այս ձևը լրացնելու ժամանակ պետք է հիշել հետևյալը՝ ա) Տալով տեղեկություններ ցանված տարածությունների մասին (1-29 կետերով), պետք է նրանց մեջ մտցնել ամբողջ ցանված տարածությունը՝ գերվաղ ժամկետում կատարված ցանքի հետ միասին։

Եթե ձևի մեջ չեն նախատեսված հացահատիկային կուլտուրաներ, որոնք սակայն կարող են լինել կոլտնտեսականների մոտ՝ ոչ համայնացված ցանքերի վերաբերյալ, կամ՝ միանձնատնտեսների մոտ, պետք է այդ ցույց տալ 2—9 դատարկ տողերից մեկի մեջ, անվանելով այդ՝ «Այլ հացահատիկներ»։ Նշված կետերում ցույց տրված ցանքերի տարածությունները գումարելու ժամանակ ստանում ենք գարնանացան բոլոր հացահատիկային կուլտուրաների ամբողջ տարածությունը։ Գարնանացան հացահատիկային կուլտուրաներին են վերաբերում՝ ցորենը, վարսակը, գարին, հաճարը, կորեկը, սորգոն, հնդկացորենը, եգիպտացորենը, բոլոր ընդեղենները, վիկա հատիկի համար և չալթուկը։

բ) 17. 18. 19. 20. 21. 22. 29. 30. 31. 32 և 33 կետերով պետք է տեղեկություններ տալ խոտերի ցանքի մասին։ Այստեղ պետք է հիշել, որ 17. 18. 19. 20. 21. 22. 29. 30 և 31 կետերում տեղեկություններ են տրվում ընթացիկ ցանքի կամպանիայի ժամանակաընթացքում ցանված տարածությունների մասին, ըստ որում 20. 21 և 22 կետերով պետք է տեղեկություններ տալ միայն բազմամյա խոտերի մասին, որոնք ցանվում են ինքնուրույն տարածությունների վրա, և ոչ թե ենթացանքս է տրվում որևէ այլ կուլտուրայի հետ (օրինակ՝ յերեքնուկի, ցանված աշնանացան հացահատիկի կամ վարսակի հետ). 29. 30 և 31 կետերով պետք է տալ տեղեկություններ ենթացանքս խոտերի ցանքի մասին, այսինքն այնպիսիների մասին, որոնք ցանվում են ենթացանքս այլ կուլտուրայի հետ, օրինակ յերեքնուկը, որը ենթացանքս է տրվում աշնան ցանքի կամ վարսակի հետ։ Եվ վերջապես, 32 և 33-րդ կետերում, որոնք լրացվում են միայն մեկ անգամ՝ երբ ամբողջ գյուղխորհուրդն ավարտում է ցանքի կամպանիան, պետք է տալ տեղեկություն բազմամյա խոտերի պահպանված տարածության մասին, որոնք ցանվել են անցյալ տարիներում և այս տարի պետք է հնձվեն։ Այս կետի մեջ բնական խոտհարքերում

ների տարածությունները մտցնելը խիստ արգելվում է։ Նմանապես արգելված է ցանքսի հանրագումարի մեջ (կետ 28) մտցնել յենթացանքսի տարածությունը (այսինքն ինքնուրույն տարածություն չունեցող) և բազմամյա խոտերի անցյալ տարիների ցանքերի տարածությունները։ Բոլոր նման դեպքերը դիտվելու յեն վորպես աչքակապության ակնհայտ փաստեր։

գ) Աշնանայանի փչացած տարածությունների տեղեկությունները (35. 36. 37 և 38 կետեր) գյուղխորհուրդը հայտնում է մեկ անգամ՝ առ 1-ն մայիսի հաշվետվության մեջ։

Փչացած պետք է համարել միայն այն տարածությունները, վորոնք փաստորեն վերացանված են կամ յենթակա յեն վերացանման, կամ թե օգտագործվելու յեն վոչ ուղղակի նպատակով (որինակ՝ տարեկանը, վոր հնձված է վորպես խոտ)։ Փչացման մասին ակտերը գյուղխորհուրդը պետք է վերցնի փչացած տարածությունը վարող հանձնաժողովի արձանագրություններից։ Փչացման վերաբերյալ ակտերը պետք է մանրամասն ստուգման յենթարկվեն, վորպեսզի փչացման անվան տակ չթաքցվի ցանքերի իսկական չափը։

Ձև №№ 4 և 5-«Հաշվետվություն կոլտնտեսությունների և մենատնտեսների բերքի տեսակների մասին»։ №№ 4 և 5 ձևերի լրացնելու վերաբերյալ հրահանգը Հողժողկոմատի կողմից կտրվի լրացուցիչ կերպով։

Ձև № 6-«Հաշվետվություն բերքահավաքի ինվենտարի վերանորոգման մասին»։ Այս ձևն առանձին պարզաբանում չի պահանջում. միայն պետք է նկատի ունենալ, վոր նրա վերաբերյալ տեղեկությունները տրրվում են ամբողջական թվերով։

Ձև № 7-«Հաշվետվություն հերկի, քաղհանի, խոտհնձի և սիլոսացման ընթացքի մասին»։ Այս ձևով տեղեկությունները տրվում են ամբողջական թվերով։

Կետ 6-դում-«Քաղհանված է աշնանացան և գարնանացան հացահատիկներ»-պետք է հայտնել աշնան և գարնան ցորենի, գարու, տարեկանի և վարսակի մասին՝ բոլոր կուլտուրանե, ի համար միասին։ Մյուս կուլտուրաների քաղհանի մասին այստեղ չի հայտնվում վոչինչ։

Բանջարեղենի, արևածաղկի և յեգիպտացորենի նկատմամբ քաղհանը իր մեջ պարունակում է վոչ միայն մոլախոտերի հեռացումը, այլև միաժամանակ, շարքերի միջի փխրացումը։

Շաքարի ճակնդեղի նոսրացումը իր մեջ պարունակում է վոչ միայն ճակնդեղի նոսրացումը շարքերում, այլև դրանից հետո կատարվող փխրացումը, ուստի նոսրացման առկայության դեպքը՝ առանց շարքերի միջի փխրացման և մոլախոտերի հեռացման՝ աշխատանքը չպետք է ավարտված համարել և չպետք է մտցնել պատասխանի մեջ։

16-րդ կետում տալով տեղեկություններ խոտհնձի մասին, պետք է մտցնել միայն բնական խոտհարքների տարածությունը և միայն առաջին հունձի մասին. բնական խոտհարքների յերկրորդ հունձը հաշվետվության մեջ չի մտցվում։

17-րդ կետում ցույց է տրվում ցանովի խոտերի տարածությունը,



վորը կոլտնտեսությունում հնձվել է վորպես խոտ՝ առաջին հունձից։

Ձև № 8.«Հաշվետվություն հացահատիկների բերքահավաքի, աշնան ցանքի և ցրտահերկի ընթացքի մասին»։ Այս ձևի բոլոր տեղեկությունները, բացի 3-րդ կետից՝ տրվում են ամբողջական թվերով։

«Մնացել է կույտերով, խրձերով և այլն», ցույց է տրվում այն տարածությունը, վորի վրա հաշվետու մոմենտին հացահատիկը մնում է կույտերով, խրձերով։

ա). 1, 2, 3 և 4 հարցերում տեղեկությունները պետք է տրվեն աշնան և գարնան ցորենի, գարու, տարեկանի և վարսակի բերքահավաքի մասին (բոլորը միասին)։ 5 և 6-րդ հարցերում ցույց է տրվում մնացած բոլոր հացահատիկային կուլտուրաների բերքահավաքը (կորեկ, հնդկացորեն, ընդեղեններ և վիկա հատիկի համար, բացի յեգիպտացորենից)։

բ) Վորպես տարբերություն անցյալ տարվա նկատմամբ, յերբ դիզված հացահատիկի հեկտարների թիվը և առանց դիզելու տեղափոխվածը ցույց է տրվել ընդհանուր գումարով, այսինքն միայն մի թվով, այս տարի այդ տեղեկությունները պետք է ցույց տալ առանձին—առանձին, այն է՝ 2-րդ կետում—«Դիզված է կամ դարսված ծածկի տակ աշնանացան և վաղ գարնանացան»-ցույց պետք է տալ ամբողջ այն տարածությունը, վորից հացահատիկը դիզված է կամ դարսված ծածկի տակ՝ հնձի սկզբից սկսած, թեև դիզված հացահատիկի մի մասն արդեն տեղափոխված է յեղել կալսիչների մոտ. այդ տարածությանն ավելացվում է նաև կոմբայնով հավաքած տարածությունը։ 4-րդ կետում ցույց է տրվում այն տարածությունը, վորի վրա հացահատիկը կալսվել է ուղղակի կույտերից կամ խրձերից և այլն, այսինքն՝ առանց դիզելու։ Այս տարածությունները նույնպես ցույց են տրվում ամբող թվերով։

գ) Ստուգելու համար, թե վորքան ճիշտ են լրացված 3 և 4 հարցերը, պետք է 2-րդ կետում ցույց տրված տարածությանը գումարել 5-րդ կետում ցույց տրվածը՝ և դա պետք է հավասար լինի հնձված տարածությանը (վորը ցույց է տրված 1 հարցի պատասխանում)։

33-րդ կետում-«Կատարված է ցրտահերկ»-ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1933 թ. օգոստոսի 11-ի վորոշման համաձայն, ցրտահերկի մեջ չի կարող մտցվել խոզանի յերեսավարը, գարնան ցանքի համար թողնված ցելերը, և փոցխված, բայց վոչ հերկված տարածությունները, վորոնք դուրս են յեկել շարքահերկ կուլտուրաների տակից։

Ձև № 9-«Հաշվետվություն կոլտնտեսություններում ցանովի խոտերի համար սերմացուներ հավաքելու մասին», առանձին վոչ մի պարզաբանում չի պահանջում։

## Ձև № 10. „ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ“

1. № 10 ձևով հաշվետվությունը լրացնելու ժամանակ պետք է ստուգել կոլխոզների անտեսությունների հաշվետվությունները, նկատի ունենալով, վոր առ հաշվետու յեռամսյակի վերջին օրը կոլտնտեսությունում յե-

ված տնտեսությունների թիվը (ընտանիքավոր և միայնակ) պետք է հավասար լինի նախորդ յեռամսյակի վերջին որը կոլտնտեսությունում յեղած տնտեսությունների թվին գումարած հաշվետու յեռամսյակում կոլտնտեսություն մտած տնտեսությունների թիվը (կետ 7), բաժանումից (կետ 11) և միացումից (կետ 13) հետո առաջացած տնտեսությունների թիվը, հանելով կոլտնտեսությունից դուրս յեկած և հեռացված տնտեսությունները (կետ 8) և բաժանված ու միացած տնտեսությունների թիվը (կետ 10 և 12)։

Նմանապես պետք է նկատի ունենալ, վոր այն դեպքում, յերբ կոլտնտեսություն է մտնում վոչ թե ամբողջ ընտանիքը—որինակ՝ միայն վորդին, ապա միայնակ է, նա պետք է համարվի մի տնտեսություն և մտցվի 7-րդ կետի մեջ։

2. Կոլեկտիվացման ընթացքի մասին հաշվետվությունները գյուղխորհրդին (և ՄՏԿ ին) ներկայացնում են միայն գյուղատնտեսական կոլեկտիվները, այսինքն՝ կոմունաները, գյուղատնտեսական արտելները և հողը միասին մշակող (հասարակական) ընկերությունները (ՏՈԶ)։ Այսպիսով, գյուղխորհրդի—կոլեկտիվացման ընթացքի մասին—հաշվետվության 1-ին կետում չեն մտցվում արդյունաբերական կոլտնտեսությունները, արտելները, ձկնորսական կոլտնտեսությունները և այլն, նաև հատուկ արդյունագործական, ձկնորսական և այլ միությունների միացած կոլեկտիվները։

3. Կետ 2-ում—„Կոլտնտեսություն չմտած գյուղացիական տնտեսությունների թիվը"—պետք է մտցնել գյուղխորհրդի սահմաններում գտնվող միայն այն տնտեսությունները, վորոնք զբաղվում են գյուղատնտեսությամբ (ունեն գյուղհարկման յենթակա օբյեկտներ, թեև նրանք ազատված լինեն դրանից) և նրանց գլխավորողներն ունեն ընտրական իրավունք։

Այսպիսով, 2-րդ կետի մեջ չեն մտցվում կուլակային տնտեսությունները (անհատական հարկադրվողները) կուլակաթափ արված տնտեսությունները (ընտրական իրավունքը չվերականգնածները) և մյուս տնտեսությունները, վորոնց տերերը զրկված են ընտրական իրավունքից այլ հանգամանքներով։ 2 րդ կետի մեջ չեն մտցվում նաև այն տնտեսությունները (ընտանիքավոր և միայնակ), վորոնք չեն զբաղվում գյուղատնտեսությամբ, այսինքն՝ բանվորները, ծառայողները, արհեստավորները և այլն, վորոնք և չունեն գյուղհարկման յենթակա յեկամտի աղբյուրներ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ, Արդյունաբերական և ձկնորսական կոլտնտեսության անդամ տնտեսությունները չպետք է մտցվեն կոլտնտեսություն չմտած տնտեսությունների թվի մեջ, թեև նրանք զբաղվելիս լինեն գյուղատնտեսությամբ (ունենան գյուղհարկման յենթակա յեկամտի աղբյուրներ)։

Ձև № 11.—„Հաշվետվություն գյուղատնտեսական բույսերի և կենդանիների վնասատուների հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների մասին"։ Այս ձևի վերաբերյալ ցուցմունքները տրված են կոլտնտեսության հաշվետվության քարտի 2 րդ յերեսում։

Բայց գյուղխորհուրդը պետք է նկատի ունենա, վոր բույսերի վնասատուների դեմ պայքարի մասին ամփոփումը կատարելով կոլտնտեսականների



հաշվետվություններով, նա պետք է ավելացնի տեղեկությունները մենատնտեսների տնտեսությունների վերաբերող և գումարը գրի հողբաժնին ուղարկվող հաշվետվության մեջ։

Ձև № 12.—„Հաշվետվություն կովադուրկ կոլտնտեսականներին կով ձեռք բերելու գործում օժանդակելու և բանող անասունների դրության մասին"—պարզաբանում չի պահանջում։

Ձև № 13.—„Տասօրյա հաշվետվություն բեղմնավորման կամպանիայի մասին"—Գյուղխորհրդի նախագահները պարտավոր են հետևել, վորպեսզի ամբողջ հաշվետու ժամանակաշրջանում բոլոր կոլտնտեսություններից և գյուղ լիազորներից հաշվետու տեղեկությունները ստացվեն իր ժամանակին և ամեն ամսի 2-ին, 12-ին և 22-ին խիստ կանոնավոր կերպով այդ տեղեկությունների ամփոփումը սահմանված ձևով ներկայացվի շրջհողբաժնին։ Ամփոփման համար ուղարկվող տեղեկությունները գյուղխորհրդում պետք է գրանցվեն բեղմնավորման կամպանիայի ընթացիկ հաշվառման աղյուսակի մեջ, վորի ձևը տրված է „գյուղատնտեսական կամպանիաների ընթացքի հաշվառման օրագրում"։ (Գյուղխորհրդների հաշվառում,—ձև № 18)։

Գյուղխորհուրդը հաշվի յե առնում բեղմնավորման կամպանիայի ընթացքը՝ անհատական տնտեսությունների վերաբերյալ միայն ձիերի և կովերի նկատմամբ, իսկ կոլտնտեսային տնտեսությունների վերաբերյալ՝ միայն կովերի նկատմամբ։

Ծածկված կենդանիների թվի մեջ պետք է յուրաքանչյուր կենդանի մտցնել միայն մեկ անգամ առաջին ծածկման ժամանակ։

Ձև № 14 —„Հաղորդագրություն ավելացած և պակասած կենդանիների մասին, վորոնք գրանցված են պետական տոհմային գրքի" (ՊՏԳ) կամ „շրջանային տոհմային գրքի (ՇՏԳ) մեջ"—։ Պետք է նկատի ունենալ, վոր բլանկի վրա այս ձևը համարակալված է № 10-ով, բայց համարների փոփոխության հետևանքով ցուցակում այս ձևը այժմ ցույց է տրված № 14-ով, վորը և պետք է համարել ճիշտ։

Գյուղխորհրդում կան կենդանիների ցուցակներ, վորոնք գրանցված են շրջանային և պետական տոհմային գրքերի մեջ, կազմված զոոտեխնիկի կողմից՝ թե մենատնտեսների և թե կոլտնտեսականների վերաբերյալ։

Տարին վերջանալուց հետո գյուղխորհուրդը պետք է ստուգի անհատների մոտ յեղած տոհմային անասունները, վորոնք գրանցված են այդ ցուցակներում և յուրաքանչյուր ավելացած կամ պակասած անասունը, վորը գրանցված է շրջանային կամ պետական տոհմային գրքի մեջ, գրանցի հաշվետվության № 14 ձևի մեջ, ցույց տալով պակասեցման կամ ավելացման պատճառները։

## ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Գյուղխորհրդի տերիտորիայում գտնվող բոլոր կոլտնտեսությունները, ինչպես ՄՏԿ ի կողմից սպասարկվողները, նույնպես և չսպասարկվողները, գյուղխորհուրդներին հաշվետվություն են ներկայացնում կոլտնտե-

սությունների համար սահմանված ձևերով։ Կոլտնտեսությունները այս ձևերը ստանում են հողբաժնի կողմից սահմանված կարգով՝ կամ անմիջականորեն հողբաժնի միջոցով, կամ գյուղխորհրդի միջոցով, իսկ ՄՏԿ-ի կողմից սպասարկվող կոլտնտեսությունները՝ ՄՏԿ-ի միջոցով։

Սակայն անկախ կոլտնտեսությունները բլանկներով ապահովելու այս կարգից, գյուղխորհուրդը պարտավոր է յուրաքանչյուր կամպանիան ըսկսելուց առաջ ստուգել՝ ապահովված են արդյոք կոլտնտեսությունները բլանկներով, և յեթե ոչ՝ աշխատել, որպեսզի շրջհողբաժինը բլանկներով ապահովի բոլոր կոլտնտեսություններին։

2. Կոլտնտեսության նախագահը հանդիսանում է պատասխանատու նրա՝ իր կողմից հաշվետվությունները ճիշտ և ժամանակին ներկայացնելու համար։

## ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ, ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՎ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Մենատնտես գյուղացիական տնտեսությունների, կոլտնտեսականների և հիմնարկների տնտեսությունների վերաբերյալ հաշվետվությունը, ինչպես ցույց է տրված վերևում, գյուղխորհուրդը ստանում է գյուղխորհրդի լիազորներից։

2. Բոլոր լիազորները պետք է գյուղխորհրդից ստանան՝

ա) Գյուղատնտեսական կամպանիայի ընթացքի հաշվառման գիրքը.

բ) Ժամկետների տախտակը՝ որով պետք է հավաքվեն և ներկայացվեն այս կամ այն տեղեկությունները։

3. Լիազորը պարտավոր է յուրաքանչյուր հաշվետու ժամկետից մեկ օր առաջ հարց ու փորձ անել իրեն ամրացված բոլոր տնտեսություններին և նրանցից ստանալ պահանջվող տեղեկությունները, և յեթե կասկածի այդ տեղեկությունների ճշտության վրա, լիազորը պարտավոր է տեղում ստուգել այդ, քանի որ նա (լիազորը) պատասխանատու յէ գյուղխորհրդին հաղորդած ամեն մի տեղեկության ճշտության համար։

4. Գյուղխորհրդի լիազորի գյուղատնտեսական կամպանիաների ընթացքի հաշվառման գիրքը (գյուղխորհրդների հաշվառման ձև № 17), հանդիսանում է որպես լիազորի հաշվետու փաստաթուղթ՝ գյուղխորհրդի առաջ. որևէ այլ բլանկ լիազորը չի լրացնում՝ այլ ուղղակի գյուղխորհրդին է ներկայացնում այն գիրքը, որի մեջ նա մտցրել է իրեն ամրացված տնտեսությունների հաշվետու ժամկետի համար հարկավոր տեղեկությունները, իր ստորագրությամբ։ Բոլոր տնտեսությունների վերաբերյալ ընդհանուր գումարները գրքի մեջ հաշվում է գյուղխորհրդի քարտուղարը։

5. Բացի այդ, լիազորը պարտավոր է ցանքը վերջանալուց հետո, ցանված տարածությունները ճիշտ հաշվի առնելու համար կազմել տնտեսատերերի ցուցակը—գյուղխորհրդների հաշվառման №№ 17 ա և 17 բ ձևերով, որոնք կցված են լիազորի գրքին. այսինքն՝ ոչ միայն հարցնել բոլոր



տնտեսություններին—նրանց ցանքի մասին և այդ մասին հաղորդել գյուղխորհրդին, ինչպես նա այդ պետք է անի ցանքի ընթացքի ժամանակ, այլ յուրաքանչյուր տնտեսություն նա պետք է գրանցի ամեն մի կուլտուրայի ցուցակում և անպայման ստորագրությամբ հետ ներկայացնի գյուղխորհրդին։ Տնտեսատերերի ցուցակի կազմելը քաղաքական դժվար գործ է, և այս գործում գյուղխորհուրդը պարտավոր է օգնել լիազորներին՝ առանձնացնելով հատուկ մարդկանց (օրինակ՝ յոթնամյակների կամ գյուղ. չքեր. դպրոցների բարձր խմբերի աշակերտներին, կոմյերիտմիության ակտիվին, և այլն), այն հաշվով, որպեսզի տնտեսատերերի ցուցակի մեջ մտցվեն բոլոր տնտեսությունները և մանրամասն ստուգված լինեն բոլոր տեղեկությունները։

Հաշվառման յենթակա յեն առանց բացառության ամբողջ ցանված տարածությունները՝ ինչպես դաշտում, նույնպես և անտառներում։

Ցուցակ՝ գյուղխորհուրդների գյուղատնտեսության վերաբերյալ (2-րդ բաժին) 1935 թ. հաշվետվությունների, որոնք պետք է ներկայացվեն շրջհողբաժին

| Ձևերի № | ՀՐԱՀԵՏՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | Հաշվետվությունը ներկայացնելու ժամանակը | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր |
| 2ա | Հաշվետվություն՝ գարնանացանի կամպանիային նախապատրաստվելու մասին | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | Մինչև գարնան ցանքի սկիզբը | | | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 |
| 3 | Հնգօրյա հաշվետվություն՝ գարնան աշխատանքների և գարնան ցանքի ընթացքի մասին | Գարնան աշխատանքների սկզբից մինչև գարնան ցանքի վերջը | | | 5, 10, 15 20, 25, 30 | 5, 10, 15 20, 25, 30 | 5, 10, 15 20, 25, 30 | — | — | — | — | — | — |
| 4 և 5 | Հաշվետվություն՝ բերքի գրության մասին | Հաշվետվություն ներկայացնելու ժամկետները ցույց են տրվելու լրացուցիչ | | | | | | | | | | | |
| 6 | Տասնօրյա հաշվետվություն բերքահավաքի ինվենտարի վերանորոգման մասին | Բերքահավաքի ինվենտարի վերանորոգման սկզբից | | | | 1, 11, 21 | 1, 11, 21 | Մինչև բերքահավաքի սկիզբը | | | | | |
| 7 | Հնգօրյա հաշվետվություն՝ հերկի, քաղհանի, խոտհնձի և սիլոսացման ընթացքի մասին | Հերկը կատարելու սկզբից | | | | 5, 10, 15 20, 25, 30 | 5, 10, 15 20, 25, 30 | 5, 10, 15 20, 25, 30 | Նույն ժամկետներում մինչև խոտհնձի և սիլոսացման վերջանալը։ | | | | |
| 8 | Հնգօրյա հաշվետվություն՝ հացահատիկի բերքահավաքի, աշնան ցանքի և ցրտահերկի ընթացքի մասին | Աշնանացանի բերքահավաքի սկզբից | | | | — | — | 5, 10, 15 20, 25, 30 | 5, 10, 15 20, 25, 30 | 5, 10, 15 20, 25, 30 | 5, 10, 15 20, 25, 30 | Նույն ժամկետներին, մինչև ցրտահերկի վերջը | |
| 9 | Միանվագ հաշվետվություն՝ կոլտնտեսություններում ցանովի խոտերի սերմացուներ առանձնացնելու մասին | — | — | — | — | Հունիսի 10-ից ոչ ուշ | | | | — | — | — | — |
| 10 | Կոլեկտիվացման ընթացքի մասին | 4 | — | — | 4 | — | — | 4 | — | — | 4 | — | — |
| 11 | Տասնօրյա հաշվետվություն գյուղատնտեսական բույսերի և կենդանիների վնասատուների դեմ պայքարելու մասին | 1, 11, 21 | 1: 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 |
| 12 | Ամսական հաշվետվություն՝ կովագոմերի կոլտնտեսականներին ամրացնելու և բանող անասունների գրության մասին | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 |
| 13 | Տասնօրյա հաշվետվություն՝ բեղմնավորման կամպանիայի ընթացքի մասին | — | — | — | 2, 12, 22 | 2, 12, 22 | 2, 12, 22 | 2, 12, 22 | 2, 12, 22 | 2, 12, 22 | 2, 12, 22 | 2, 12, 22 | 2, 12, 22 |
| 14 | Հաշվառում՝ ավելացած և պակասած կենդանիների մասին, որոնք գրանցված են ՓՏԳ ՇՏԳ մեջ | 5 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |

Ցուցակ՝ գյուղխորհուրդների 1935 թ. հաշվետվության ներկայացման ժամկետների

| Ձևերի № № -ը | ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հաշվետվություն՝ ձմեռային և ձմեռա-գարնանային ջրումների ընթացքի մասին. | 2, 12, 22 | 2, 12, 22 | 2, 12, 22 | Ձմեռային ջրումներ չի լինում | | | | | | | 2, 12, 22 | 2, 12, 22 |
| 2 | Հաշվետվություն՝ վեգետացիոն ջրումների ընթացքի մասին | — | — | — | 4, 9, 14, 19, 24, 29 | 4, 9, 14, 19, 24, 29 | 4, 9, 14, 19, 24, 29 | 4, 9, 14, 19, 24, 29 | 4, 9, 14, 19, 24, 29 | Մինչև վեգետացիոն ջրումների վերջը | | | |
| 3 | Հաշվետվություն՝ բամբակի նախացանքային մշակման ընթացքի մասին. | Հերկի սկզբից | | 2, 7, 12, 17, 22, 27 | 2, 7, 12, 17, 22, 27 | Մինչ հերկի վերջանալը | | | — | — | — | — | — |
| 4 | Հաշվետվություն՝ այգիներ, խաղողանոցներ և հատապտուղներ տնկելու մասին. | — | — | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | — | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 |
| 5 | Հաշվետվություն՝ այգիների, խաղողանոցների յև հատապտուղների ամառային խնամքի մասին. | — | — | — | — | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | — | — | — | |

Ծանոթություն.—№ № 4 և 5 ձևերով հաշվետվությունը (լրացուցիչ-հատուկ) տարածվում է միայն ապրանքային այգեգործություն, խաղողագործություն և հատապտուղներ ունեցող շրջանների վրա: Այս շրջանների ցուցակը հաստատվում է հանրապետական կառավարության կողմից:



Յուրաքանչյուր անասնատեր (մենատնտես, թե կոլտնտեսական) կամ հիմնարկություն, որոն ունի ցանկեր, (փակատար պատասխանատու յն առանձնաները ցուցակի մեջ տեղեկությունների ճշտության համար, և սխալ տեղեկություններ տալու դեպքում հանցավորները պատասխանատու են, քրեական խորհրդային կառավարության խարզղներ:

Գյուղատնտեսության վերաբերյալ լրացուցիչ հատուկ հաշվետվության հրահանգը շրջհողբաժինների կողմից կուղարկվի միայն այն գյուղխորհուրդներին, որոնք պարտավոր են այդ լրացուցիչ հաշվետվությունը ներկայացնելու:

(Հաշվետվության ներկայացման ժամկետների պախտակը տես ձևեր 22, 23, 24-ում):

## III. բաժին.—ՖՈՆԴԱՅԻՆ

Ձև № 15.— «Բնակչության միջոցների մոբիլիզացիայի հաշվետվություն»:

Այս ձևը պետք է կազմել ամսական յերեք անգամ (ամսի 10-ը, 20-ը և 30-ը) ամեն թվերով՝ սկսած յուրաքանչյուր յեռամսյակի սկզբից: Հետևապես, յեռամսյակի առաջին հաշվետվության մեջ մտցված են առաջին տասնօրյակի գանձումները, յերկրորդում՝ քսանօրյակի, յերրորդում՝ ամբողջ ամսվա գանձումները և այլն, այնպես մինչև յեռամսյակի վերջը: Առանձին վճարումներով գանձված գումարները հաշվետվության մեջ մտցնելու համար ինչպես ընդհանուր գումարը, նույնպես և ավյալներն ըստ առանձին սոցիալական խմբերի, պետք է վերցնել պետհարկերի հաշվառման, կոոպերատիվ տարհավաքման և այլ վճարումների գրքերից:

(«Գյուղխորհուրդների հաշվառում»—Ձև № 29):

Ձև № 16.—«Հարկերի ապառքների հաշվետվություն»: Դրա մեջ մտցվում են գյուղհարկի, ինքնահարկման, կոոպերատիվ տարհավաքման և կուլտուրայի վճարումների ապառքների գումարները: Հաշվետվությունը կազմվում է յեռամսյակը մեկ անգամ՝ հաշվետու յեռամսյակի վերջին ամսվա ավյալներով:

Մինչև-ընթացիկ տարվա վճարման վերջին ժամկետի լրանալը հաշվետվությունում պետք է ցույց տալ միայն անցած տարվա ապառքները: Ընթացիկ տարվա գրքույկների վճարման վերջին ժամկետը լրանալուց հետո միայն, անցած և ընթացիկ տարվա ապառքի գումարները ցույց են տրվում մեկ ընդհանուր գումարով: Հաշվետվության մեջ մտցնելու համար պետք է ավյալները վերցնել ապառքատերերի ցուցակից («Գյուղխորհուրդների հաշվառում»—Ձև № 24):

Գյուղհարկի № 17, 18, 19, 20 և 21 ձևերը լրացնելու մասին կանոնները կտրվեն Ֆինանսական Ժողկոմատի կողմից՝ 1935 թ. գյուղհարկի օրենքը հրապարակելուց հետո:

Ձև № 22.—«Բյուջեի կատարողական հաշվետվություն»: Գյուղական բյուջեի կատարման ամսական հաշվետվությունում պետք է ցույց տալ ըս

ստացված յեկամուտների և կատարված ծախքերի գումարները—տարվա սկզբից, աճող թվերով՝ ըստ յեկամուտների և ծախքերի առանձին տեսակների (ըստ բյուջետային անվանակարգի-կլասիֆիկացիայի՝ հատվածների, պարագրաֆների և հոդվածների): Այսպես օրինակ, օգոստոս ամսվա հաշվետվության մեջ պետք է ցույց տալ տարվա սկզբից 7 ամսվա տվյալները, իսկ սեպտեմբերին՝ 9 ամսվանը և այլն:

Հաշվետվություն կազմելու համար տվյալները պետք է վերցնել գյուղական բյուջեյի առանձին յեկամուտների և ծախքերի տեղեկագրից («Գյուղխորհրդների հաշվառում»—Ձև № 27-ա և 27-բ), հաշվետվության մեջ փոխանցելով տեղեկագրի «Մուտք և յելք» և «Ծախսված և՝ տարվա սկզբից» ընդհանուր գումարները:

Այն դեպքում, յերբ գյուղխորհուրդն ունի ինքնուրույն վարկի կարգադրիչներ և նրանց կողմից տարվում է բյուջետային միջոցների ծախսման ինքնուրույն հաշվառում, գյուղխորհրդի առանձին տեղեկագրերով ծախսված գումարի վրա պետք է ավելացնել նաև վարկերի կարգադրիչների կողմից ծախսված գումարները ըստ՝ նրանց կողմից ներկայացված հաշվետվությունների հիման վրա:

Գյուղբյուջեների կատարման հաշվետվությունների ճշտությունը պետք է ստուգել հետևյալ կերպ. հաշվետու ժամանակամիջոցի սկզբին դրամարկղում կամ ընթացիկ-հաշվում յեղած մնացորդի վրա պետք է ավելացնել հաշվետու ժամանակամիջոցում մուտք յեղած գումարները և հանել նույն ժամանակամիջոցում կատարված փաստացի ծախքերը: Սրա ստացված գումարը պետք է համապատասխանի գյուղբյուջեյով գյուղխորհրդի դրամարկղում և ընթացիկ հաշվում ունեցած գումարներին: Մնացորդի ճշտությունը պետք է ստուգել դրամարկղային գրքով և համեմատելով վարկային հիմնարկի (խնայողական դրամարկղի կամ պետբանկի) տեղեկանքների հետ:

Գյուղբյուջեյի կատարման վերաբերյալ գյուղխորհրդի դեկտեմբեր ամսվա հաշվետվությունը (աճող գումարներով—տարվա սկզբից) միաժամանակ հանդիսանում է գյուղբյուջեյի կատարման տարեկան հաշվետվությունը:

Հաշվետվությունը պետք է ներկայացնել ամիսը մեկ անգամ՝ հաջորդ ամսվա 3-ից վոչ ուշ:

Ձև № 23.—«Տեղական բյուջեյով պահպանվող հիմնարկների հատուկ միջոցների հաշվետվություն»:

Տեղական բյուջեյով պահպանվող հիմնարկների հատուկ միջոցների տարեկան հաշվետվությունը գյուղխորհուրդները ներկայացնում են «այլ գումարների և հաշվարկների գրքի» անձնական հաշիվների հիման վրա:

Յեթե գյուղխորհուրդներն ունեն ինքնուրույն վարկերի կարգադրիչներ և նրանց կողմից տարվում է ինքնուրույն հաշվետվություն, գյուղխորհրդի «այլ գումարների և հաշվարկների գրքով» (գ. խորհրդ. հաշվառման ձև № 28) հաշվի առնված գումարների վրա պետք է ավելացնել վարկերի կարգադրիչների կողմից ներկայացված հատուկ միջոցների հաշվետվության մեջ ցույց տված գումարները ևս:

Հատուկ միջոցների տարեկան հաշվետվությունը պետք է ներկայաց-



նել տարեկան մեկ անգամ, բյուջեյի դեկտեմբեր ամսվա հաշվետվության հետ միասին:

Ձև № 24.—«Հաշվետվություն պարտադիր գույքային ապահովագրության վճարումների հաշվարկման և մուծման մասին»:

Պետական գույքային ապահովագրության հաշվարկման և վճարումների մուծման վերաբերյալ 1935 թ. հաշվետվությունն ըստ վճարողների կատեգորիաների՝ կազմում են գյուղխորհուրդները, առ 1-ն հունվարի և 1-ն ապրիլի տվյալներով:

Առաջին տողում պետք է ցույց տալ նախապես հաշվարկված գումարը (նախքան արտոնություններ տալը) և անցյալ տարիների հետևույթը:

Յերկրորդ տողում պետք է ցույց տալ ապահովագրական վճարումների անհաշվարկված գումարները, վորոնք ցույց են տված «Գյուղխորհրդների հաշվառման» № 23 ձևում:

Յերրորդ տողում պետք է ցույց տալ հաշվարկի պահին և նրանից հետո կատարված զեղչերի և արտոնությունների ամբողջ գումարը:

Չորրորդ տողում ցույց է տրվում գանձման յենթակա գումարը, այսինքն՝ առաջին տողի հաշվարկված և յերկրորդ տողի—նոր հաշվարկված գումարները պետք է միացնել և ստացված գումարից 3-րդ տողի՝ արտոնության և զեղչերի գումարը:

Հինգերորդ տողում պետք է լրացնել գույքային ապահովագրության գանձված գումարների տվյալներ «Պետական հարկերի, ապահովագրական և այլ գանձումները հաշվառման գրքի» հիման վրա («Գյուղխորհրդների հաշվառում»—№ 29 ձև): Այդ գումարները պետք է լրիվ չափով համապատասխանեն այն գումարներին, վորոնք ցույց են տված միջոցների մոբիլիզացիայի հաշվետվությունում (գյուղ. խորհրդների հաշվետվության № 15 ձևվ):

Ձև № 25.—«Պարտադիր գույքային ապահովագրություն»:

Ձև № 25-ը լրացնելու կարգի մասին Համամիութենական Ֆինժողկոմատի կողմից կհայտնվի տեղերին, համապատասխան օրենքները հրապարակվելուց և 1935 թ. հաշվետվությունների ձևերը հաստատելուց հետո:

## 4-րդ բաժին. ՄԹԵՐՔՆԵՐ

Ձև № 26.—«Ամփոփում այն տնտեսությունների մասին, վորոնք կաթի, յուղի և մսի հանձնման իրենց պարտավորությունները չեն կատարել ժամկետին»:

Ամփոփումը պետք է կազմել յերեք օրինակից՝ յուրաքանչյուր մթերքի համար առանձին (կաթի, յուղի յեվ մսի համար՝ առանձին-առանձին):

Յեթե ամփոփումը ներկայացվում է մսի համար, պետք է ձևի վերնագրի «կաթի և յուղի» բառերը ջնջել, յեթե ամփոփումը տրվում է կաթի համար, այդ դեպքում պետք է ջնջել «յուղի» և «մսի» բառերը, իսկ յեթե ամփոփումը յուղի մասին է, պետք է ջնջել «կաթի» և «մսի» բառերը:

Կաթի և յուղի ամփոփումները պետք է ուղարկել շրջգործկոմ ամեն ամիս՝ հաջորդ ամսվա 5-ից վոչ ուշ:

Կաթի և յուղի ամփոփման համար տեղեկությունները պետք է վերցնել կաթի և յուղի հանձնման իրենց պարտավորությունները ժամկետին չկատարած տնտեսությունների ցուցակի ընդհանուր գումարներից («Գյուղխորհրդի հաշվառում»—ձև № 43)։ 1-ին սյունակում պետք է թվել այն կոլտնտեսությունները և կոլտնտեսու. ապրանքային ֆերմաները, վորոնք իրենց պարտավորությունները չեն կատարել ժամկետին։

3-րդ սյունակում, պարտավորությունների №№ ը պետք է գրել միայն կոլտնտեսությունների և կոլտնտեսու. ապրանքային ֆերմաների դիմաց, իսկ կոլտնտեսականների, մենատնտեսների և կուլակների դիմաց, պարտավորությունների №№-ը չեն նշանակվում։ Մնացած սյունակների համար տեղեկությունները պետք է վերցնել «Գ. Խ. հաշվառման» № 43 ձևի համապատասխան սյունակների ընդամեն ավյալներից։ Կաթի և յուղի ամփոփման 7-րդ սյունակը բոլորովին չի լրացվում։

Մսի վերաբերյալ ամփոփումը շրջգործկոմ է ուղարկվում յեռամսյակը մեկ անգամ՝ հաջորդ յեռամսյակի առաջին ամսվա 5-ից վոչ ուշ։

Մսի վերաբերյալ ամփոփման համար տեղեկությունները պետք է վերցնել մսի հանձման պարտավորությունները ժամկետին չկատարած տնտեսությունների ցուցակի ընդամեն ավյալներից։ («Գ. Խ. հաշվառման» ձև № 40 ա.)։

1-ին սյունակում նշվում են այն կոլտնտեսություններն ու կոլտնտես. ապրանքային ֆերմաները, վորոնք մսի հանձման իրենց պարտավորությունները չեն կատարել ժամկետին. 3-րդ սյունակում, յուրաքանչյուր կոլտնտեսության և կոլտնտես. ապրանքային ֆերմայի դիմաց պետք է նշել պարտավորությունների № № ը։ 2-ից մինչև 8-րդ սյունակը (ներառյալ) ամփոփումների համար տեղեկությունները պետք է վերցնել «Գ. Խ. հաշվառման» № 40 ա. ձևից։

Ձև № 27.—«Ամփոփում՝ պետության բրդի հանձնման իրենց պարտավորությունները ժամկետին չկատարած տնտեսությունների մասին»։

Ամփոփումը պետք է լրացնել տարին 2 անգամ և ներկայացնել շրջգործկոմ, հարկ վճարողների կողմից բրդի հանձնման համար սահմանված ժամկետը լրանալուց 5 օր հետո։

Այս ձևի համար տեղեկությունները պետք է վերցնել բրդի հանձնման իրենց պարտավորությունները ժամկետին չկատարած տնտեսությունների ցուցակի («Գ. Խ. հաշվառման» ձև № 45) ընդհանուր գումարներից։

1-ին սյունակում պետք է գրել այն կոլտնտեսություններն ու վոչխարաբուծական ապրանքային ֆերմաները, վորոնք իրենց պարտավորությունները չեն կատարել ժամկետին։

2-րդ սյունակում պարտավորությունների №№-ը նշվում են միայն կոլտնտեսությունների և վոչխարաբուծական ապրանքային ֆերմաների դիմաց, իսկ կոլտնտեսականների, մենատնտեսների և կուլակների համար պարտավորությունների №№-ը չեն գրվում։

3-ից մինչև 13-րդ (ներառյալ) սյունակների համար տեղեկություննե-



րը պետք է վերցնել «Գ. Խ. հաշվառման» № 45 ձևի համապատասխան սյունակներից։

14-րդ սյունակում (պետք է մթերվի բնականով) պետք է կրկնել այն քանակը, վոր ցույց է տրված 13-րդ սյունակում. իսկ ամփոփման 15-րդ սյունակի համար պետք է տեղեկություններ վերցնել «Գ. Խ. հաշվառման» № 45 ձևից (նույնպես 15 րդ սյունակից)։

Ձև № 28.—«Պարտավորությունների թերակատարման (բնականով) և դրամական տուգանքների անվիճելի կարգով կատարվող գանձումների ամփոփում»։ Ամփոփումը պետք է կազմել գյուղատնտեսական արտադրանքի յուրաքանչյուր տեսակի՝ ա) հատիկային, արևածաղիկի, բրնձի, բ) կարտոֆիլի, գ) յուղի, կաթի, դ) մսի և ե) բրդի համար առանձին։ Մթերքների անունը գրվում է բլանկի վերին մասում, ձևի վերնագրի տակ։

Հատիկային արտադրանքի՝ բրնձի, արևածաղիկի, նույնպես և կարտոֆիլի վերաբերյալ ամփոփումները պետք է ներկայացնել ԽՍՀՄ ԺԿԽ-ի Մթերման Կոմիտեյի շրլիազորին՝ յուրաքանչյուր ամսվա համար հաջորդ ամսի 5-ին. այդ կուլտուրաների վերաբերյալ ամփոփման համար տեղեկությունները պետք է վերցնել հատիկային կուլտուրաների, արևածաղիկի, բրնձի և կարտոֆիլի հանձնման իրենց պարտավորությունները ժամկետին չկատարած տնտեսությունների ցուցակից («Գ. Խ. հաշվառման ձև № 37»-ի ընդհանուր գումարները)։

Ամփոփման մեջ պետք է ցույց տալ գանձումների (դրամով և բնականով) քանակն ու չափը՝ ըստ տնտեսությունների առանձին կատեգորիաների. այսինքն ցույց տալ կոլտնտեսականների, մենատնտեսների, կուլակների տուգանված տնտեսությունների թիվը՝ առանձին-առանձին։ Կոլտնտեսությունները ու կոլտնտեսական ապրանքային ֆերմաները պետք է ամփոփման մեջ նշվեն յուրաքանչյուրն առանձին։ «Գանձման յենթակա յե» սյունակում (դրամով և բնականով) պետք ցույց տալ տուգանումների ընդհանուր գումարը՝ դուրս գցած այն գումարները (գյուղատնտ. մթերքների և դրամի), վորոնք փաստորեն արդեն գանձված են նրանցից մինչև հաշվետու ամսվա սկիզբը։

Օրինակ.—Կարտոֆիլի մասին ամփոփումը կազմվում է նոյեմբերի 5-ին. հուլիսի, օգոստոսի, սեպտեմբերի և հոկտեմբերի ընթացքում գյուղխորհըրդին առաջարկված է յեղել տուգանման կարգով գանձելու 15 մենատնտեսային տնտեսություններից ընդամենը՝ 2,200 կգ. կարտոֆիլ և 1400 ռուբ. դրամով։ Հուլիսի, օգոստոսի և սեպտեմբերի համար գյուղխորհուրդը փաստորեն գանձել է 6 մենատնտեսներից՝ 700 կգ. կարտոֆիլ և 200 ռուբլի դրամով։ Նոյեմբերի 5-ին № 28 ձևով հոկտեմբեր ամսվա համար ամփոփում կազմելիս «յենթակա յե գանձման» սյունակում պետք է ցույց տալ տուգանքների առ. 1-ն հոկտեմբերի պարտքի մնացորդը, այսինքն՝ 1500 կգ. կարտոֆիլը (բնականով) և 1200 ռ. (դրամով). «Հանձնողների թիվը» սյունակում պետք է ցույց տնտեսությունների այն քանակը, վորոնցից տուգանքները ստացված են յեղել հոկտեմբերին. իսկ համսվա ընթացքում փաստորեն գանձված

ի» սյունակում՝ հոկտեմբերին մուտք յեղած տուգանքների գումարն ու քանակը:

«Դատապարտումների մասին նշումներ» սյունակում պետք է ցույց տալ այն մեղադրանքների թիվը, վորոնց նկատմամբ հոկտեմբերին կայացված են յեղել դատավճիռներ՝ (ըստ քրեական օրենսգրքության համապատասխան հատվածների) կարտոֆիլի հանձնման պարտավորությունները չըկատարելու համար գույքը բռնագրավելու մասին:

Կաթի, յուղի, մսի և բրդի վերաբերյալ ամփոփումները պետք է ներկայացնել Մթերման Կոմիտեյի շրջլիազորին—յուղի և կաթի համար ամիսը մեկ անգամ, մսի համար՝ կիսամյակը մեկ անգամ և բրդի համար՝ տարին յերկու անգամ: Կաթի և յուղի ամփոփման մեջ տվյալները պետք է վերցնել կաթի և յուղի հանձնման պարտավորությունները ժամկետին չկատարած տնտեսությունների ցուցակից («Գ. Խ. հաշվառման» ձև № 43, սյունակներ՝ 4, 5, 6, 7 և 9):

Մսի վերաբերյալ ամփոփումները պետք է կազմել, վերցնելով տվյալներ մսի հանձնման պարտավորությունները ժամկետին չկատարած տնտեսությունների ցուցակի ընդամեն գումարներից: («Գ. Խ. հաշվառման» ձև № 40 ա. սյունակներ՝ 7, 9, 11, 13 և 16):

Բրդի վերաբերյալ ամփոփման համար պետք է տվյալներ վերցնել բրդի հանձնման պարտավորությունները ժամկետին չկատարած տնտեսությունների ցուցակի ընդամեն գումարներից («Գ. Խ. հաշվառման» ձև № 45):

Բոլոր տեսակի մթերքների վերաբերյալ ամփոփումների մեջ անհրաժեշտ է տալ թվական տվյալներ հաշվետու ժամանակամիջոցում (ամսվա, յեռամսյակի և կիսամյա) կատարած գանձումների քանակի և չափի մասին, ցույց տալով այդ ժամանակամիջոցում փաստորեն վճարած տուգանքների գումարները: Իսկ նախորդ ժամանակներում չգանձված տուգանքների գումարները պետք է ամփոփման մեջ ցույց տալ առանձին՝ ձևի նախավերջին տողում, ներքևից հաշված:

## V Բաժին.— ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

### ՁԵՎ № 29 «ԱՄՓՈՓՈՒՄ ԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ»

Ամփոփումը կազմում է թոշակառուների գյուղական հանձնաժողովի նախագահը կամ նախագահի օգնականը և հետևյալ հաշվետու տարվա հունվարի 15-ին ներկայացնում սոցիալական ապահովության շրջանային տեսչությանը:

Հաշվետվությունը պետք է կազմել ամբողջ տարվա ընթացքում գյուղական հանձնաժողովների կողմից քննված գործերի և դրանց նկատմամբ կայացրած վորոշումների քանակի հիման վրա, վորոնք գրանցված են հանձնաժողովի գործերում:

Հաշվետվության 1-4 սյունյակներում պետք է գրել քննված գործերի թիվը՝ ըստ հանձնաժողովի ընդունած վորոշումների բնույթի:

Բլանկի վերջին կետում պետք է ցույց տալ հաշվետու տարվա վերջին ամսում գյուղխորհրդում յեղած թոշակառուների ընդհանուր թիվը:



Թոշակառուների քանակը վորոշելու համար պետք է հաշվել ապահովագրվածների վերաբերյալ գյուղխորհրդում յեղած անձնական քարտերը («Գյուղխորհրդների հաշվառման» ձև № 49):

## VI Բաժին.— ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ձև № 30.—«Քաղաքացիական կացության ակտերի յերկրորդ որինակների ցանկ»: Ցանկը, քաղաքացիական կացության ակտերի յերկրորդ օրինակների հետ միասին, («գյուղխորհրդների հաշվառում» ձև №№ 5, 6,7 և 8) պետք ներկայացնել ՆԳԺԿ-ի շրջանային վարչությանը (Զագսի բաժին) հաշվետու ամսվան հաջորդող ամսի 2-ից վոչ ուշ: Տվյալ ցանկում ցույց տրված ակտային գրանցումների համարները պետք է ճշտորեն համապատասխանեն ակտային գրքերում նշված այդ գրանցումների համարներին:

Ակտային գրքերում ակտերի համարակալումը պետք է կատարել յուրաքանչյուր տեսակ ակտի համար առանձին (ծնունդ, մահ, ամուսնություն և այլն) և պետք է լինի հետևողական ու անընդհատ ամբողջ տարվա ընթացքում՝ հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ: Յեթե տվյալ ամսում այս կամ այն ակտերի գրանցում չի յեղել, այդ դեպքում ցուցակի մեջ պետք է լինի դրա մասին նշում՝ «ամուսնության գրանցում չի յեղել» կամ՝ «մահվան գրանցում չի յեղել» և այլն:

## VII Բաժին.— ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ձև № 31.— «Հաշվետվություն ստորին ցանցի ճանապարհների շինարարության և բնակչության աշխատանակցության պլանի կատարման մասին»

Հաշվետու քարտը պիտի լրացնի գյուղխորհրդի քարտուղարը և ներկայացնի շրջգործկոմի ճանբաժնին, այն հաշվով, վոր վերջինս քարտը ստանա հետևյալ հաշվետու ամսի 5-ից վոչ ուշ:

Հաշվետվություն կազմելու համար բոլոր հիմնական թվական տվյալները պետք է վերցնել ճանապարհային աշխատանքների ղեկավարների առանձին տեղեկագրերից՝ ընդհանուր գումարով («գյուղխորհուրդների հաշվառում» ձև № 47):

Յուրաքանչյուր աշխղեկ պարտավոր է վարել առանձին տեղեկագիր՝

1) Նյութերը մթերելու և տեղափոխելու համար,

2) Նորոգման աշխատանքների համար,

3) Նոր ճանապարհաշինարարության համար,

4) Գյուղական և շրջանային նշանակություն ունեցող ճանապարհների համար,

5) Յերեք բարձր կարգի (класс) ճանապարհների համար:

I, II, III և IV բաժինների վերաբերյալ տեղեկությունները պետք է տալ յուրաքանչյուր ամիս, իսկ 5 և 6-ի վերաբերյալ՝ յեռամսյակը մեկ անգամ: I-ին բաժնի մեջ պետք է մտցնել ճանապարհների շինարարության և նորոգման համար պահանջվող՝ նյութերը, մթերելու և տեղափոխելու վերաբերյալ տեղեկությունները: 2-րդ, 4-րդ և 7-րդ

սյունակներում ցույց է տրվում թե քանի խորանարդ մետր քար, հող և շինանյութ է մթերված և քանի խորանարդ մետր է բերված աշխատանքի վայրը։ Այս տվյալները պետք է տալ ամսե-ամիս՝ աճող գումարներով, օրինակ հունվարի ընթացքում, առ 1-ն փետրվարի մթերված է 250 խ. մ. քար և բերված է աշխատանքի վայրը 120 խ. մետր, իսկ փետրվարի ամսին մթերված է 300 խ. մ. և բերված է աշխատանքի վայրը 180 խ. մ. ուրեմն՝ առ մարտի 1-ը (փետրվարի համար) կազմված հաշվետվության քարտի 2-րդ սյունյակում պետք է ցույց տալ հունվարի և փետրվարի ընդհանուր գումարը, այսինքն՝ 250+300, որը հավասար է 550 խորանարդ մետրի, իսկ 3-րդ սյունյակում՝ 120+180, որը հավասար է 300 խորանարդ մետրի։

I-ին բաժնի 2-ից մինչև 8-րդ սյունյակների համար տեղեկությունները պետք է վերցնել աշխղեկների տեղեկագրերի (№ 48 ձևերի) «Ինչ աշխատանքներ են կատարված» բաժնից։

II-րդ բաժինն ունի ենթաբաժին՝ ա) «Նոր շինարարություն» և բ) «Հիմնական վերանորոգում»։

Այս բաժնի 10-րդ սյունակում պետք է ցույց տալ, թե քանի խոր. մետր հողային աշխատանք է կատարված՝ մեծ հողաթմբեր, պատնեշներ, ջրատար առուներ և այլն կառուցելիս։

11, 12, 13, 14 և 15-րդ սյունակներում ցույց են տրվում ճանապարհի շերտերի համար կատարած աշխատանքները, իսկ 16-րդ և 17-րդ սյունակներում ցույց են տրվում արհեստական կառուցվածքների համար կատարված աշխատանքները։

11-ից մինչև 17-րդ սյունակներում ցույց պետք է տալ միայն ավարտված աշխատանքները, այսինքն ճանապարհի երթևեկման համար պատրաստ մասը, կամ պատրաստ արհեստական կառուցվածքը։ Այս տվյալները նույնպես պիտի ցույց տալ տարվա սկզբից՝ աճող գումարներով։

18-րդ սյունակում ցույց է տրվում ծառատնկված ճանապարհների երկարությունը։

19-րդ սյունակում ցույց է տրվում ճանապարհների վրա դրված կիլոմետրային սյուները, իսկ 20-րդում ցուցիչ նշանների քանակը։

21-րդ սյունակում պետք է ցույց տալ այն ճանապարհների քանակը, որոնք հատուկ ակտերով ամրացված կամ հանձնված են առանձին գյուղերին, կոլտնտեսություններին, խորհտնտեսություններին, ՄՏԿ-ներին և այլն՝ անմիջական հսկողության ընթացիկ վերանորոգման և պահպանման համար։

II բաժնի 10—20 սյունակները լրացնելու համար էլ պետք է տեղեկությունները վերցնել աշխղեկի տեղեկագրի (№ 47 ձևի) «Ինչ աշխատանքներ են կատարված» բաժնի 9—18 սյունակներից։

III բաժնում՝ «Աշխ. մասնակցությունը» ցույց է տրվում աշխատած մարդօրերի և սայլ-օրերի քանակը, առանձին՝ գյուղական և առանձին՝ շրջանային նշանակություն ունեցող ճանապարհների համար (այդ թվում առանձին—առանձին ՄՏԿ-ների, կոլտնտեսությունների, խորհտնտեսություն-



ների, մենատնտեսների և կուլակային տնտեսությունների համար), և բացի այդ, առանձին գումարով պետք է ցույց տալ բոլոր կարգերի ճանապարհների վրա աշխատած մարդ-օրերի և սայլ-օրերի թիվը։

23 և 24-րդ սյունակներում աշխատած մարդ-օրերի և սայլ-օրերի թիվը ցույց է տրվում աճող գումարով՝ տարվա սկզբից։

25-րդ սյունակում աշխատած մարդ-օրերի և սայլ-օրերի արժեքը պիտի ցույց տալ ամբողջ Խորհրդային Միության համար սահմանված հաստատուն գներով՝ մարդ-օրը հաշված 2 ռ. 30 կ., իսկ սայլ-օրը՝ 4 ռ. 40 կ. Օրինակ՝ Սամաղարի գյուղխորհուրդը հունվար ամսին օգտագործել է 200 մարդ-օր և 100 սայլ-օր, իսկ փետրվար ամսին՝ 300 մարդ-օր և 200 սայլ-օր, ուրեմն, առ 1-ն մարտի հաշվետու քարտում, որ ուղարկվում է շրջանային բաժնին, 23-րդ սյունակում գրվում է (200+300) 500 մարդ-օր, բազմապատկած 2 ռ. 30 կ. հավասար է 1150 ռ. և 24-րդ սյունակում՝ (100+200) 300 սայլ-օր, բազմապատկած 4 ռ. 40 կ., հավասար է 1320 ռ., իսկ 25-րդ սյունակում՝ գրվում է 2470 ռ. (որը հավասար է 1150+1320 ռ.)։

III բաժինը լրացնելու համար տեղեկությունները պետք է վերցնել նույն աշխղեկների տեղեկագրերի 12-րդ սյունակից («Գյուղխորհրդների հաշվառում» № 47 ձևի «ընդամենը կատարված են մասից»)։

IV բաժնի 26-րդ սյունակում գրվում է այն մուծումների գումարը, որ հավաքված է ճանապարհային աշխատանքներից այս կամ այն պատճառով ազատված տնտեսություններից։ 27-րդ սյունակում գրվում է աշխ. մասնակցությունից խուսափողներից գանձված տուգանքների գումարը։ 28-րդ սյունակում գրվում են ճանապարհների շինարարության և նորոգման շահագրգռված տնտեսական կազմակերպություններից ստացված միջոցները։ 29-րդ սյունակում ցույց են տրվում գյուղական և շրջանային բյուջեներից ճանապարհաշինարարության համար հատկացված միջոցները։ 30-րդ սյունակում ցույց է տրվում տարվա սկզբից մինչև հաշվետու ամսվա վերջը ծախսած գումարը։

IV բաժնի (դրամական միջոցների շարժումը) տեղեկությունները պետք է վերցնել հետևյալ ձևերից՝

ա) Պետական պարտավորությունների կատարման հաշվառման մատյաններից («Գյուղխորհրդների հաշվառում» ձև № 3)։

բ) Գյուղական բյուջեի և եկամուտների ու ծախսերի տեղեկագրից («Գյուղխորհրդ. հաշվառում» ձև № 27 ա և 27 բ)։

V բաժնի (Ճան. աշխատողների կազմը) 32-րդ սյունակում ցույց է տրվում գյուղխորհրդների և կոլտնտեսությունների ճանվարպետների թիվը՝ հաշվետու ամսի վերջին։

Այդ տեղեկությունները պետք է վերցնել գյուղխորհրդների արձանագրությունների գրքից («Գյուղխորհրդների հաշվառում» ձև № 50) և կոլտնտեսությունների վարչություններից։

VI բաժնի 31-րդ սյունակում ցույց է տրվում ճան. մեքենաների քանակը։

Այդ տեղեկությունները պետք է վերցնել գույքացուցակներից (Գյուղ

խորհրդների հաշվառումը ձև № 30) գյուղխորհրդին պատկանող ձեռնարկ. գույքի մասին, իսկ կոլտնտեսություններին պատկանող ձեռնարկ. գույքի մասին տեղեկությունները պետք է վերցնել կոլտնտ. վարչություններից:

VI բաժնի 34-րդ սյունակում գյուղխորհրդի և կոլտնտեսության ձեռնարկությունների գույքը ցույց է տրվում միասին:

Հաշվետվությունը կազմելիս պետք նկատի ունենալ հետևյալը՝

1) Մթերված շինությունների (առաջին բաժին) և կատարված աշխատանքների (երկրորդ բաժին) վերաբերյալ տվյալները պետք է ցույց տալ միայն առաջին ցանցի, այսինքն՝ գյուղական և շրջանային նշանակություն ունեցող ձեռնարկների համար, իսկ աշխատած մարդ-օրերի և այլ ծախսերի տեղեկությունները տրվում են բոլոր կարգերի ձեռնարկների համար:

2) Երեք բարձր կարգի ձեռնարկների համար մթերված և փոխադրված շինությունները, ինչպես նաև կատարված աշխատանքները (այդ ձեռնարկների և կառույցների շինարարության կամ վերանորոգման վերաբերյալ) գյուղխորհրդի հաշվետվության մեջ չեն մտնում, փոխարեն նրանք ցույց են տրվում ձեռնարկհաշվառարական և ձեռնարկհաշվարկման գծամասերի հաշվետվությունների մեջ:

## VIII բաժին — ԱՇԽԱՏԱՆՔ

Ձև № 32.—«Անձնակազմի և աշխատավարձի ֆոնդի ծախսման հաշվետվություն»:

1. Հաշվետվությունը պետք է ներկայացնել եռամսյակը մեկ անգամ, հաշվետու եռամսյակը վերջանալուց հետո՝ 10 օրից ոչ ուշ:

Առաջին և երկրորդ սյունակներում պետք է ցույց տալ գյուղխորհրդի բոլոր, թե մշտական և թե ժամանակավոր աշխատողներին, անկախ նրանից, թե ինչպիսի միջոցներով են նրանք պահվում:

2. Առաջին սյունակում պետք է ցույց տալ հաշվետու եռամսյակի ամսի 1-ին գյուղխորհրդի ցուցակներում գրված աշխատողների թիվը, իսկ 2-րդ սյունակում՝ հաշվետու եռամսյակի վերջին օրը:

3. Երրորդ սյունակի համար աշխատավարձի վերաբերյալ տեղեկությունները պետք է վերցնել հաշվետու եռամսյակի ընթացքում գյուղխորհրդի աշխատողներին բոլոր տեսակի միջոցներով (բյուջեյով, հատուկ միջոցներով և այլն) վճարած աշխատավարձի փաստաթղթերից:

Աշխատավարձի կազմի մեջ, բացի աշխատած ժամանակի վարձատրությունից (սովորական, արտաժամյա, ժամանակավոր, գործավարձ), պետք է մտցնել նաև հաշվետու եռամսյակի ընթացքում հերթական արձակուրդում գտնվողներին տրված գումարները և հաշվետու եռամսյակի այլ վճարումները, բացի՝ գործուղման օրապահիկից և ձեռնարկհամատեղքերից, որոնք չեն մտցվում 3-րդ սյունակում:

4. Չորրորդ սյունակում պետք է մտցնել հաշվետու եռամսյակում կողմնակի անձանց (որոնք չեն համարվում տվյալ գյուղխորհրդի աշխատողներ) տրված աշխատավարձի գումարը:



5. Աշխատավարձի ֆոնդի կազմի մեջ չպետք է մտցնել (հետևապես և չեն հաշվվում հաշվետվության 3 և 4-րդ սյունակներում) աշխատավարձի բոլոր տեսակի վերապահումները (տոկոս, տեղկոմի պահպանության և այլն)

6. Հինգերորդ և վեցերորդ սյունակներում պետք է ցույց տալ համապատասխան վերադաս կազմակերպության կողմից տվյալ գյուղխորհրդի համար սահմանված աշխատողների թվի և աշխատավարձի ֆոնդի եռամսյակային պլանը:

## IX Բաժին. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ձև № 33.—«Ապահովագրական մուծումների հաշվարկային տեղեկագիր»:

Այս տեղեկագիրը պետք է կազմել յուրաքանչյուր ամիս: Գյուղխորհուրդները սոցիալական ապահովագրության հաշվարկումներն ու մուծումները կատարում են յուրաքանչյուր պրոֆմիության համար առանձին (բժշկա-սանիտարական, դպրոցական, պետհիմնարկների, վարչական հիմնարկների և այլ աշխատողների միության),—ՀԱՄԿԽ-ի 1934 թ. փետրվարի 4-ի № 90 և ԽՍՀՄ Ֆինժողկոմատի 1934 թ. փետրվարի 4-ի № 70 որոշումներով սահմանված կարգով:

Գյուղխորհուրդներն ապահովագրական մուծումների հաշվարկումներն ու վճարումը կատարում են հաշվարկման տեղեկագրերով և գումարների փոխանցման մասին Պետբանկին տրած կարգադրություններով:

Ձև № 33-ը պետք է լրացնել այս կերպ.—

### I-ԻՆ ՄԱՍ՝ «ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ»

ա) Վերնագրում պետք է ցույց տալ մուծումները վճարող գյուղխորհրդի մանրամասն անունը, հասցեն և գյուղխորհրդի համար որոշված №-ը:

բ) Բացի այդ, հաշվարկային տեղեկագրերը համարակալվում են հերթական №-ով՝ յուրաքանչյուր պրոֆմիության համար առանձին. տեղեկագրի մեջ պետք է անպայման ցույց տալ ապահովագրական մուծումները վճարելու և հաշվարկումներ կատարելու ամիսը:

Հաշվարկային տեղեկագրի մեջ տեղեկությունները պետք է մտցնել աշխատավարձի վճարման տեղեկագրերից («Գյուղխորհուրդների հաշվառում», ձև № 31):

գ) 1-ին սյունակում պետք է ցույց տալ ամ. 1-ն մարտի գրված բոլոր բանվոր—ծառայողների ընդհանուր քանակը, հաշվելով՝ թե մշտապես աշխատողներին և թե ժամանակավոր կամ համատեղության կարգով աշխատողներին:

դ) 2-րդ սյունակում պետք է ցույց տալ՝ 1-ին սյունակում նշված բոլոր անձնավորությունների համար հաշվարկված աշխատավարձի ընդհանուր գումարը:

ե) 3 րդ սյունակում պետք է նշել՝ 2-րդ սյունակում ցույց տված աշխատավարձի քանակից հաշվարկված սոցապ. մուծումների գումարը՝ այսինքն, աշխատավարձի քանակի 10,75 տոկոսը (այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր մեկ ռուբլուց—10 3/4 կոպեկ)։

զ) 4-րդ սյունակում պետք է ցույց տալ ամսվա ընթացքում հատկացված գումարները (պրոֆմիությունների կողմից ձևակերպված փաստաթղթերով)—ժամանակավոր անաշխատունակության համար (հիվանդանոցային թերթիկներով), յերեխայի ծննդյան և սննդի լրացուցիչ նպաստներ, թաղման (Զագսի քաղվածքը) և աշխատանքի հաշմանդամներին տված թոշակների (հաշվարկային թերթերի) գումարները, վորոնք վճարվում են սոցապահովագրական մուծումների հաշվին։

է) 5 րդ սյունակում պետք է ցույց տալ այն գումարը, վոր պետք է փոխանցել համապատասխան պրոֆմիության կենտվարչության սոցապահովագրության գանձարկղի ընթացիկ հաշվին (3-րդ սյունակի տվյալներից՝ հանած՝ 4 րդ սյունակի գումարը)։

ը) Հաշվարկման տեղեկագրի վերջում ստորագրում են գյուղխորհրդի նախագահն ու հաշվետարը կամ քարտուղարը և հաստատում կնիքով, նշանակելով նաև ամսաթիվը (պետք է նկատի ունենալ, վոր հաշվարկման տեղեկագիրը պետք է ներկայացնել հաջորդ ամսվա 5-ից վոչ ուշ)։

## 2-ՐԴ ՄԱՍ՝ «ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԲԱՆԿԻՆ»

ա) Վերնագրում պետք է գրել գյուղխորհրդի անունը.

բ) Դրա ներքևի տողում պետք է ցույց տալ պետբանկի կամ խնայդրամարկղի շրջանային այն բաժանմունքը, վորի միջոցով պետք է փոխանցել սոցապահովագրական մուծումների վճարման յենթակա գումարը։

գ) Կարգադրությունը պետք է համարակալել հաշվարկման տեղեկագրի №-ով։

դ) Կարգադրության մեջ պետք է ցույց տալ գյուղխորհրդի հաշվի №-ը, վորից պետք է փոխանցել գումարը, նաև, անպայման, այն պրոֆմիության սոցապահովագրության գանձարկղի անունը և պետբանկում ունեցած նրա ընթացիկ հաշվի №-ը, վորին պետք է փոխանցել սոցապմուծումների գումարը։

ե) Փոխանցվելիք գումարը պետք է ցույց տալ թվանշաններով—ռուբլիներով ու կոպեկներով. այս գումարի ռուբլիների քանակը պետք է գրել նաև տառերով։

զ) Կարգադրության վերջում նույն ստորագրություններն ու կնիքը պետք է լինի, ինչ վոր հաշվարկային տեղեկագրի վրա յե։

Հաշվարկման տեղեկագիրն ու կարգադրությունը գյուղխորհուրդն ուղարկում է պետբանկի կամ խնայդրամարկղի շրջանային բաժանմունքին։

Հաշվարկման տեղեկագրի մյուս յերեսը՝ «ծանուցագիրը» լրացնում է պետբանկի կամ խնայդրամարկղի շրջանային բաժանմունքը։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՍԽՀ-ССР



# ՑԱՆԿ

Երես

1. ԽՍՀՄ ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի 1933 թ. ողոստոսի 23-ի վորոշումը՝ գյուղխորհուրդների և շրջգործկոմների հաշվետվության կրճատման մասին . . . . . 1
2. ԽՍՀՄ ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի 1934 թ. դեկտեմբերի 7-ի վորոշումը՝ գյուղական խորհուրդների և շրջանային գործադիր կոմիտեների հաշվետվության մասին . . . . . 3
3. Գյուղխորհուրդների 1935 թ. պարբերական հաշվետվությունների ցանկը . . . . . 4
4. ՀՍԽՀ ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի 1933 թ. դեկտեմբերի 23-ի վորոշումը՝ հաշվառման վերաբերյալ անկանոն տեղեկություններ ու հաշվետու տվյալներ ներկայացնելու, նաև հաշվառման և հաշվետվության ձևերն ու ժամկետները խախտելու վերաբերյալ պատասխանատվություն սահմանելու մասին . . . . . 8
5. Հրահանգ՝ գյուղխորհուրդների 1935 թ. հաշվետվության ձևերի լրացման մասին . . . . . »
I բաժին—Դաշտաշխատանք . . . . . 10
II » —Գյուղատնտեսություն . . . . . 11
III » —Ֆինանսներ . . . . . 25
IV » —Մթերումներ . . . . . 27
V » —Սոցիալական ապահովություն . . . . . 30
VI » —Բնակչություն . . . . . 31
VII » —Կոմունալբնակարանային, շինարարություն . . . . . »
VIII » —Աշխատանք . . . . . 34
IX » —Սոցիալական ապահովագրություն . . . . . 35